




Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՋԳԸՅԻՆ. ԲԸՆԸՄԻՐԸԿԸՆ, ԳԸԸԳԻՏԸԿԸՆ
ԵՒ ՔԸՂԸՔԸԿԸՆ



ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐԳԸՆ ՄԻԸՄԵԸՅ



ՅԵՐՈՒՍԸՂԻՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1871



ՎԵՅՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ
ԹԻ 12.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԴԵՎՏԵՐԱԲԵՐ 31.
1871.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Սոց և ԱԹԱՄԱՐԱՅ կաթողիկոսական խնդիրները, քանի մի տարի էն ի վեր, գրաւած էին Ազգային Վարչութեան և համօրէն Ազգի ուշադրութիւնը: Ատենական արձանագրութիւնք, պարբերական հրատարակութիւնք, մասնաւոր տեղեկագիրք և յայտարարութիւնք, աւելի կամ նուազ սոյն խնդրոց նշմարանքները կը կրեն: Արդարեւ՝ խնդրոց լուծումն առաւել քան զչափն յետաձգեցաւ, բայց բաւականին բանաւոր և գրաւոր կարծիքներ եւս յերեւան ելան, յուզեցան և պարզեցան: Սոյն խնդրոց առաջինն, այսինքն

Սոյ կաթողիկոսականն, իւր լուծումն ստացաւ ընտրութեամբ և վաւերացմամբ նորրմտիւր և երանաշնորհ կաթողիկոսի Տանն Արիւկիոյ Տ. Տ. Սիրոյի Սարաջցոյ: Անդորրացաւ Ղիլիշեան կարծեցեալ կուսակցութեան յուզումն, ստուերացաւ Արապեան կամ Յէրապեական կաթողիկոսութեան բռնազըռտիկ գրութիւնն. փարատեցաւ թեմական խտրութեան նորերեւոյթ մռայլն, և ապահովեցաւ Ալեքեցոյ միութիւնը, որ ազգային միութեան գրաւականն է ի սկզբանէ անտի բրիտանական լուսաւորութեան Ազգի Հայոց:

Արդարեւ՝ դարուց փափոխմունքը, քաղաքական հանգամանքները և տեղական յարաբերութեանց դժուարութիւնքը յառաջ բերած են երկու կամ երեք կաթողիկոսական աթոռներ, երկու կամ երեք Վաթողիկոսներ, բայց Նիկեղեցին միշտ անխախտ մնացած է իւր ներքին և էական միութեան մէջ, և միշտ խոստովանած է արդեամբ, որ մի է իւր քահանայութիւնը, մի է իւր եպիսկոպոսութիւնը, մի է իւր կաթողիկոսութիւնը, մի է իւր միւռնոն, մի է իւր ձեռնադրութիւնն, մի է իւր օծումն, մի է իւր ծիսարանն, մի է իւր դաւանութիւնն, մի է և իւր վարդապետութիւնն :

Ինչպէս քահանայից և եպիսկոպոսաց բաղմութեամբ ենթադրուած չէ երբէք տարբեր քահանայութիւն և եպիսկոպոսութիւն, նոյնպէս և ոչ կաթողիկոսաց երկուութեամբ կամ երեքնութեամբ տարբեր կաթողիկոսութիւն : Վասն զի Նիկեղեցւոյ միութեան խարխալը ոչ թէ անձանց սակաւութեան կամ շատութեան, ոչ թէ աթոռոյ կամ աթոռներու, ոչ թէ աթոռակալի կամ աթոռակալներու, այլ իւր դաւանութեան, իւր վարդապետութեան, իւր ծիսից և արարողութեանց մէջ խոստովանուած է : Վասն զի տեղիք և անձինք ժամանակի և արտաքին պարագաներու ենթակայ են, կարեն փոփոխիլ, կարեն առժամանակ մի ընդհատիլ, կարեն առաւելուլ և նուազիլ, կարեն դժուարիլ և խաղաղիլ, (ինչպէս պատահած է երբեմն) : Իսկ սկզբունքի և դաւանութեան միութիւնն այնպէս չէ, նա հաւաքական միութեան խոստովանութիւնն է : Նա շատ սրտեղութեամբ միօրինակ խորհուրդն և շատ ձայնեղութեամբ արտասանութիւնն է :

Ուր անխախտ է այս ներքին միութիւնը, այն տեղ չը կայ բնաւ երկուութիւն կամ երեքնութիւն : Տասներկու էին Վրիստոսի առաքեալները, բայց մի էր իրենց առաքելութիւնը, մի և իրենց կոչումն : Հայոց կաթողիկոսները՝ մի, երկու կամ երեք եղած են ըստ բերման ժամանակին, բայց մի եղած է իրենց կաթողիկոսութիւնը, Նզդին կամ Նիկեղեցւոյն համար : Այսօր ևս մի է նոյն կաթողիկոսութիւնը, թէպէտ և կաթողիկոսները երկու կամ երեք : Չկայ, չէ եղած և կարող չէ լինիլ Հայաստանեայց Նիկեղեցւոյն մէջ երկու էապէս տարբեր կաթողիկոսութիւն, վասն զի մին իսկոյն կը մերժուի և կաթողիկոսութիւն չը համարուիր նոյն Նիկեղեցւոյն համար, ինչպէս է մեր Հռովմէադաւան ազգայնոց կաթողիկոսութիւնը, որ սկզբունքով, ընտրութեան և վստեղացման եղանակաւ և դաւանութեամբ տարբեր լինելով, կարող չէ երբէք Հայաստանեայց Նիկեղեցւոյ կաթողիկոսութիւն համարուիլ :

Հայաստանեայց Նիկեղեցւոյ խոստովանած կաթողիկոսութիւնը մի է, և փոյթ չէ, եթէ կը կրէ Նմիսաճնի Սոյ և Նշթամարոյ անունն, վասն զի երբեմն եւս կրած է անունն Վնայ, անունն Ննայ, անունն Թաւ-Ֆլոյ և այլն : Այս անունները ինքնին կարող են միանալ, երբ արտաքին պարագաները նպաստեն, և երբ Նզգը իրապէս համոզուի, որ տեղեաց միութեամբ՝ անլուանդ կարող է մնալ իւր կաթողիկոսական ներքին միութիւնը :

Ենք կարող ենք համարձակ աւսել, որ Նզգային Վարչութիւնը, Վիլիկիոյ Վաթողիկոսի ներկայ ընտրութեամբ և հաստատութեամբ, առաւել ապահովեց Հայաստանեայց Նի-

կեղեցւոյ կաթողիկոսական միութիւնն ու էութիւնը, և մաքրեց սրբեց քանի մի սեւաթոյր բիծերէ, ինչպէս էին Արապահեան ցեղապետութիւնը և թեմական խորութիւնը, որ յետին ժամանակաց և յետամիտ մտաց արտադրութիւնք էին և ոչ թէ Արեւելոյ առաքելական Տեսութեան ըսկզբունք, որ ի սկզբանէ անտի բնութեան վրայ հիմնուած է և ոչ ցեղապետութեան, արժանաւորութեան՝ և ոչ թեմականութեան, Սենք այնպէս կ'ընդունինք, որ եկեղեցականի ցեղը կամ տոհմը, թեմը կամ որբանը ժողովուրդն է և Արեւելոյն, որ զինքն ի պաշտօն կը կոչէ: Աորա պաշտօնի բուն վիճակը կամ սահմանը Աւետարանի վարդապետութեան սահմանն ու ցանկն է, զոր չէ կարող խրամատել՝ առանց իւր պաշտօնէն դադրելու: Աորա հաւատարմութեան ուխտը՝ Արեւելոյ աւանդապահութեան ուխտն է: Այս ուխտը, ուր որ կատարուի, թէ՛ յժմիածին և թէ՛ ի Սիս, պահանջողն է Արեւելոյն, վասն զի Այժմիածինն ու Սիսն եւս Արեւելոյն են: Աթէ ենթադրենք, որ մի և նոյն Արեւելոյն երկու տարբեր ուխտ կը պահանջէ, սաստիկ հաւատութեան մէջ կը գլորինք և Արեւելոյն Արեւելոյ դէմ՝ զինելով կը քայքայենք նորա նուիրական միութիւնը:

Սոյն միութեան ճշմարտութիւնը աւելի կը պարզուի, երբ եկեղեցական հովուաց և կաթողիկոսաց յարաբերութեան էական պայմանները նը կատարութեան առնունք:

Ի՞նչ է եկեղեցական պաշտօնէութիւնն, եթէ ոչ սարսաւորութիւն աստուածային Բանի, ծառայութիւն ընդհանուրին ի սէր Աստուծոյ և ի շինութիւն համօրէն Արեւելոյն:

Ի՞նչ յարաբերութիւն կարէ լինիլ սոյնօրինակ նուիրական պաշտօնի պաշտօնակալաց մէջ, եթէ ոչ բարոյական քաջաբերութիւն, օժանդակութիւն, միաբան գործակցութիւն ի կատարումն միակ նպատակի, և փոխադարձ սէր և վշտակցութիւն:

Արդ՝ եկեղեցական պաշտօնէութիւնն, եթէ իւր առաքելականութեան և պարզութեան մէջ նկատենք, կը տեսնենք ակներեւ, որ Արեւելոյն որոշած է ամեն պայման, ամեն յարաբերութիւն և ամեն սահման: Ո՞վ է Սողոմոն կամ ո՞վ է Ապոլոնիոս, եթէ ոչ ծառայք հաւատացելոց վասն Քրիստոսի: Ո՞վ է Այժմիածին եպիսկոպոսն և ո՞վ է Սոյ եպիսկոպոսն, եթէ ոչ սպասաւորք Հայ Առաքելական ի սէր Աստուծոյ: Ո՞վ է Այժմիածին կաթողիկոսն և ո՞վ է Սոյ կաթողիկոսն, եթէ ոչ պաշտօնէաց և աւանդապահք Հայաստանեայց Արեւելոյ, եթէ ոչ տեսուչք և գիտապետք եկեղեցական կարգաց և կանոնաց, եթէ ոչ ընտրեալ մշակք և առաջնորդք աւագային բարոյական և մտաւոր լուսաւորութեան: Այնչափ փառաւոր կարող է լինիլ իրենց պաշտօնը, որչափ մեծ է իրենց ծառայութիւնը, անթերի իրենց արթնութիւնը, աննկուն իրենց արիւթիւնը և կատարեալ իրենց անձնուիրութիւնը: Վասն զի, բարոյական պաշտօնի մեծութիւնն ու փառքը այս պայմաններով միայն կը չափուին և ոչ թէ արտօքին երեւոյթներով, վիճակաց բաղմամբարդութեամբ, նիւթական ճոխութեամբ և աշխարհային շքեղութեամբ:

Սենք միայն կը լսենք, և տակաւին չը գիտենք՝ թէ Ազգային Արեւելոյն փոխանութիւնն ի՞նչ պայմաններ կամ կանոններ որոշած է կամ պիտի որոշէ Վաթողիկոսաց և Ազգային Վարչու-

Թեան յարաբերութեանց նկատմամբ : Բայց մեր կողմէն այդպիսի միայն կտակներ, որ եկեղեցական տեսչութեան մէջ, յարաբերութեանց պայմաններն միայն բարոյական կարող են լինել, ինչպէս որ եղած են ՚ի սկզբանէ, և ոչ տարօրինակ : Աշխարհային փառաւորութեան, աստիճանի բարձրութեան կամ ստորնութեան գիտումներ բնաւ երբէք կարող չեն տեղի ունենալ բարոյական իշխանութեան մէջ : Եւ այս եւս կը յաւելունք, որ կաթողիկոսութեան միութեան սկզբունքը անարատ և անսասան պահպանելու համար, ամեն պայման մի միայն իրաւանց և պարտուց, համարաութեան և համարատուութեան մէջ եղբերելու է, և ոչ այլապէս : Բարոյական յարաբերութեան առաջին և միակ պայմանն այս է, որ Եկեղեցին կամ Ազգը ճանաչէ որ ինքն համարաւոր է, իսկ բնաւորաւ պաշտօնեայն ճանաչէ, որ ինքն պատասխանատու է Աստուծոյ, համարատու է ժողովրդին : Եկեղեցական պաշտօնէութիւնն, եթէ իրաւունք, իշխանութիւն և ազատութիւն մի ունի, այն եւս իւր պարտուց կատարման ազատութիւնն է, այսինքն ազատ է որչափ կամի հոգեւոր բարեք մոտոսկրաբերել իրեն յանձնուած հօտին : Իսկ Եկեղեցւոյ վարդապետութենէն, դաւանութենէն և դաբերով սրբադարձուած ծէսերէն և արարողութիւններէն, նշանախեց մի փոփոխելու անգամ իրաւունք և ազատութիւն չունի, վասն զի սոյն իրաւունքը՝ միմիայն Եկեղեցւոյ անկաւորաւ սեպհականութիւնն է և ոչ որ և իցէ անհատի, կամ եկեղեցական պաշտօնէի : Այս հիմնական պայմանները հանդիսապէս խոստովանելն զինի, ինչ յարաբերութիւն կը մը-

նայ ուրեմն | Չմիտճնի, Սոյ և Աղթաւ մարայ կաթողիկոսաց և Ազգային Վարչութեան մէջ, և կամ | Չմիտճնի, Սոյ և Աղթաւ մարայ կաթողիկոսաց մէջ եթէ ոչ ՀԱՄԱԿԱՄՈՒԹԻՒՆ ՚ի բարոյական շինութիւն ընդհանուրին, եթէ ոչ ՄՐՑՈՒՄՆ սիրոյ և դարձունէութեան, եթէ ոչ ԱՋԱԿՑՈՒԹԻՒՆ ՚ի միակ և ՚ի վսեմ պաշտաման կաթողիկոսութեան :

Ամբողջութեամբ մեր խօսքը :

Հայաստանեայ Եկեղեցին շատ քահանայք, շատ վարդապետք և եպիսկոպոսներ ունի, բայց մի քահանայութիւն, մի վարդապետութիւն և մի եպիսկոպոսութիւն : Երկու կամ երեք կաթողիկոսներ ունի, բայց մի կաթողիկոսութիւն, մի հայրապետութիւն և մի քրիստոնէական կոչումն Արեւելքի մէջ : Ով որ այսպէս չըմբռներ կաթողիկոսութիւնը, նա կը հակառակի Եկեղեցւոյ ոգւոյն և կը մեղանչէ ժողովրդի բարեպաշտական ամբիժ համոզման դէմ, որ Եկեղեցւոյ պաշտօնէից սակաւութեան կամ շատութեան մէջ բնաւ երբէք երաւած չէ սկզբունքի և դաւանութեան տարբերութիւն :

Ուրեմն գոհութեամբ սրտի գովելով Եկեղեցւոյ ժողովրդեան և Ազգային Վարչութեան համակամ քուէարկութիւն ու վաւերացումն, և շնորհաւորելով արժանաւոր Տ. Տ. Սիրտի կաթողիկոսի մեծ և նուիրական պաշտօնն, հայցեմք Աստուծոյ, որ դորայնէ թէ՛ զինքն և թէ՛ զերանաշնորհ կաթողիկոսն Ս. | Չմիտճնի, աստուածահաճոյ խորհրդով հանրաշահ իմաստութեամբ և քաջարթուն արիւնթեամբ՝ գործել ՚ի շինութիւն և ՚ի միութիւն Ազգին, ՚ի պայծառութիւն Եկեղեցւոյ և ՚ի փառս միոյն Աստուծոյ :

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա Ռ Ո Ղ Զ Ո Ւ Թ Ե Ա Ն

(Հարունակութիւն , տես թիւ 11 :)

Բարկութիւն :

Այս կիրք ամբոխէ զմիտս , այլադունէ զգէմս , տագնապէ զըջան աւրեան և վեր ՚ի վայր առնէ զբոլանդակ կենսական և սննդական զօրութիւն մարմնոյ , նաեւ երբեմն պատճառէ զյանկարծական մահ :

Վտանգ այսր կրից այնչափ սաստիկ է , որչափ մահառիթ թոյն , յատկապէս յայնոսիկ ողբ են փափկասունք , տկարամարմինք , և որք ըմբռնեալ են ՚ի ջղային , ՚ի թոքային և ՚ի լերդային ցաւս , ՚ի շնչարգել կամ յաչացաւս , զի այսպիսի անձինք բաղում անգամ սաստիկ բարկութեամբ պատճառեն զմահ անձին կամ սաստկացուցանեն զցաւ իւրեանց : Վտան որոյ ամենայն խոհականութեամբ արժան է առհասարակ ամենեցուն , եթէ առողջաց , եթէ տկարաց և եթէ ամուսնորաց կարի զգուշութեամբ զգէմ ունիլ այսմ վտանգաւոր կիրից :

Կարի ճշմարիտ է , թէ չէ միշտ ՚ի կարողութեան մերում ՚ի սաստեղբաւ բարկութիւն մեր . բայց հաւատարմահնար է ամենեցուն մերժել ՚ի սրտէ զթագայեալ ցասումն կամ զնիւթ բարկութեան , գուն գործելով մոռանալ զառիթուն , կամ հանել յաչաց ՚ի բայ՝ եթէ կարեւոր է զպատճառսն . քանզի ոչինչ այնչափ անհանգիստ առնէ զմեզ , որչափ բարկութիւնն , յատկապէս ցասումն վրէժխնդրութեան , որ իբրեւ զբոց վառէ զսիրտ մեր , և բորբոքէ զմեզ իբրեւ զլանթիս երկաթոյ , և վարանեալ զմիտս՝ առնէ ըզ-

մեզ իբրեւ զկատաղի գաղան , յորմէ և պատճառի երկարատև հիւանդութիւն , կամ յանկարծակի մահք ժայթմամբ արեան , որպէս և ժամանակաւինչ առաջ պատահեցաւ ՚ի Սամարանդ՝ միում ՚ի հայազանց մերոց , որ ՚ի սաստիկ ցասմանէ ժայթքեաց արիւն և մատնեցաւ ՚ի մահ : Չիք ինչ ճշմարիտ գերազանցութի մտաց և գերազնիւ բարեգթութիւն սրտի , քան մոռանալ ըզմնաս կրեալս յուժեքէ , և ներել յանցանայն ՚ի սրտէ : Այս քննայէ ըզխաղաղութիւն ընկերութեան և ընձեռէ անձին մերում՝ զհանգստութի , զառողջութիւն և զբարեբաստութի : Վրք ճանաչէ զանգին արժանիս առողջութեան , զյարգ խաղաղութեան կենաց և զանդորրութի մտաց , պարտ է մերժել յինքնէ զյոժարութիւն բարկութեան և զցասումն վրէժխնդրութեան , զի ազատ մնացէ ՚ի բուռն հարուածոց նորա . և վայելեացէ զառողջ և զխաղաղ կեանս :

Երկու

Ներդործութիւն երկիւղէ ՚ի պատճառել կամ ՚ի ծանրացուցանել զհիւանդութիւնն՝ է կարի սաստիկ :

Հոգալն ուրուք զհամեստ դործառնութեանց ՚ի պէտս կենաց , չէ բնաւ նախատելի . բայց որ սաստիկ ցանկութեամբ զհեա լինի այնմ , բաղում անգամ կորուսցէ զսրս և ունէր : Այսպէս և զկասկած իրիք մնասու , վտանգի կամ զհիւանդութեան հնար է խափանել , բայց սաստիկ երկիւղ և անձկութիւն սրտի ոչ միայն բառնայ զամենայն միջոց դիւրութեան , այլ ճնշեալ զղորութիւն մարմնոյ , բերէ ՚ի մեզ զանհնարին հիւանդութիւն , զսասանումն զգայութեանց և ըզ-

լքումն մտաց, որոց վախճանն է ելք կենաց :

Յանկարծակի երկիւղն կամ սարսափ ունի զսաստիկ ներգործութիւն 'ի վերայ մարմնոյ և 'ի վերայ մտաց, զի պատճառէ զվերնոտութիւն կամ զկարկամեցուցիչ և ցնցողական հիււանդութիւն, որ կարի տաժանելի է և գրեթէ անբժշկելի : Վտանգ այս պիտի երկիւղի հասարակ է երեխայից, մանկանց և տղայոց, որք 'ի զարհուրանաց ինչ կորուսանեն զկեանս, կամ վտանգին 'ի ցնորամոտութիւն և կամ յայլ կենսամիտ պակասութիւն ինչ, վասն որոյ հարկ է ամենայն գործ վագութ ծնողաց ամենայն զգուշութեամբ փոյթ տանիլ ազատ պահել 'ի զարհուրեցուցիչ առարկայէ և 'ի սարսափելի իրաց, 'ի ձայնէ անասնոց, ևս յատկապէս 'ի զարհուրելի պատմութենէ : քանզի բաց 'ի վտանգէ, եթէ երկիւղ ինչ տպաւորեսցի 'ի նոսա, անհնարին է դիւրեալ վտարել զայն 'ի նոցանէ, որ և առ սակաւ սակաւ հաշէ և հիւծէ զմարմինն մինչեւ ցմահ : Այս զգուշութիւն երկիւղի ոչ միայն հարկաւոր է առնել վասն երեխայից, այլ և մարդ իսկ, որք դիւցուցանեն զերեխայն, քանզի երկիւղ մօրն թունաւորէ ըզկաթն, և պատճառէ երեխային բռնական շարժումն կամ կարկամումն մկանանց, որ հանէ զնա 'ի գրկաց մօր 'ի մէջ վեց կամ երկուտասան ժամու :

Առ սակաւ սակաւ ներգործութիւն երկիւղի կարի վտանգաւոր է, զի մշտական երկիւղ անցեալ արկածից կամ ասպունի չարեաց պատճառէ կարի վնասակար հետեւանս, և գրեթէ բազումք մեռանին յայնպիսի հիւանդութենէ, որ պատճառեալ է յերկարատեւ զարհուրանաց, կամ տպաւորեալ 'ի միտս 'ի սաստիկ երկիւղէ

ղէ արկածից ինչ, և կամ յանմիտ կասկածանաց պէսպէս չարագուշակ վտանգաց : Այս գրեթէ բազում անգամ պատահի կանանց 'ի յերկուշըս ծննդեան, յորոյ 'ի միտս կանխաւ տպաւորեալ երկիւղ իմն 'ի վտանգաւոր դիպուածոց յերկունս ծննդեան այլոց, տուժին և ինքեանք 'ի կենաց :

Անհնար է եթէ 'ի մեծամեծ քաղաքսն, յորս են բազմութիւ բնակիչք, ոչ իցէ այսպիսի տրտմալի վտանգ, զի պատահէ երբեմն երկու կամ երեք կանայք պատճառաւ իւրիք մեռանին յերկունս ծննդեան, և այս դէպք պատճառէ բազմաց մանկաբեր կանանց զմահ : Վասնորոյ պարտ է նախ խոհական բանիւք յորդորել զկանայս եթէ 'ի յղութեան և եթէ յերկունս ծննդեան խոտել զամենայն երկիւղ և սնոտի կասկած 'ի սրտէ : Արկորդք՝ ամենայն զգուշութեամբ փոյթ տանիլ մերժել զընկերակցութիւն չաղակրատ և լեղուագար կանանց, որք սուր են մտանել առ այսպիսիս, և անփակ բերանով շնջել յականջս զչարաբաղդութիւն այլոց, Առ երրորդ՝ ամենայն չար կամ տրտմալի լուր, կամ վտանգաւոր և երկիւղալի դիպուած ինչ, որոց հնար է պատճառել 'ի նոսա սաստիկ տրտմութիւն, երկիւղ, խռովութիւն կամ բարկութիւն, պարտ է ամենեւին ծածկել 'ի նոցանէ, եւս և 'ի ժամանակս դիւեցման մանկան :

Այս զգուշութիւն ըստ ամենայնի և ամենայնիւ հարկաւոր է վասն ամենայն հիւանդաց, յատկապէս վասն այնոցիկ, որք են 'ի վտանգի և որոց ախտացեալ են թոքացաւութեամբ, լերդացաւութեամբ, ուրովայնալուծութեամբ, ջղային և փորբերան ախտիւ, և այլն :

Տրամուխիւն :

Տրամուխիւնն առաւել խափա-
նիչ է առողջութեան քան զամենայն
կիրս . զի ներգործութիւնք սորին են
տեւողական և սաստիկ յոյժ , որ և
յորժամ խոր 'ի միտս տարրանայ , ա-
ռաւել վնասակար է քան զթոյն մա-
հաբեր :

Բարկութիւն և երկիւղ են բը-
նութեամբ զօրաւոր քան զայլ կիրս ,
բայց 'ի վնասել երբեմն երկարեն .
սակայն տրամուխիւնն բազում ան-
գամ փոխի 'ի սեւամաղձային թաղ-
ծութիւն , որ և ուժգին իմն բռնանայ
'ի վերայ զօրութեանց մարմնոյ և մը-
տաց և մաշէ զկազմուածն մինչև ցը-
վախճան կենաց :

Այ կարէ սք արգելլուլ զդէպս ի
րիք տարաբաղդութեան , բայց որ
կարէ տանիլ այնմ խաղաղ մտօք և
անդորր սրտիւ , ցուցանէ յինքն զճըշ-
մարիտ գերազանցութիւն մտաց և
վսեմութիւն սրտի . Ասկայն են բա-
զումք , որոց 'իպատահել գժբաղդու-
թեան ընկղմին 'ի սաստիկ տրամու-
խիւնս , և մերժեն յինքեանց միան-
գամայն զամենայն մխիթարութիւն
և զյոյս . մինչև միտքն իսպառ ընկ-
ճեալ 'ի թաղծութենէ՝ ընկղմի 'ի
ծանր տարտամութիւն , 'ի վտանգ և
'ի կորուստ կենաց : Այսպիսի թըշ-
ուառ կեանք ոչ միայն անվայելուչ է
մարդկութեան , այլ եւ ընդդէմ ար-
դարութեան և մարդկային զգայու-
թեան : Այսն որոյ մինչ ոչ է բռնա-
ցեալ այսր կրից 'ի վերայ մեր , հարկ
է մեզ ամենայն զգուշութեամբ հըս-
կել ընդդէմ նորա , և չտալ տեղի
բնաւ , ապա թէ ոչ ամենայն ջանք մեր
'ի մերժել զայն՝ ընդունայն լիցին :

Փոփոխումն երեւակայութեան և
մտաց այնչափ օգուտ է առողջութե ,

որչափ փոփոխութիւն տեսարանաց
յաչս 'ի բերկրութիւն հոգւոյ և մար-
մնոյ . քանզի յորժամ միտք կամ երե-
ւակայութիւնն յարեալ կայ միշտ առ
առարկայ ինչ , յատկապէս եթէ իցէ
այն անհաճոյ և տրտմալի , վնասէ ա-
մենայն կենսական զօրութե մարմնոյ ,
որով և պատճառի անմարտութիւն ,
պակասութիւն ախորժակի , տկարու-
թիւն ջղաց , փրացաւութիւն աղեաց
և ապականութի հիւլթոց : Արոց միտք
վհատեալ է վշտալի տրամութեամբ ,
անհնար է նոցա վայելել զառողջ և
անցաւ կեանս :

Այլ քանի քանի կորովի և գեղեց-
կայարմար կազմուածով անձինք թէ
'ի տարաբաղդութենէ ընտանեաց , և
թէ 'ի ձախող ինչ գիպուածոց ըմ-
բըռնեալ յանհնարին տրամութիւնս՝
զրաւեցան 'ի կենաց :

Իրաւի է , զի ոչ ազատի որ , եթէ հա-
րուստ , եթէ աղքատ , եթէ մեծ և ե-
թէ փոքր 'ի գերանդւոյ մահուան . բայց
ով որ ցանկայ վայելել զերկար կեանս ,
չափաւորեցէ զկեցութիւն իւր , և
կեցցէ միշտ խնդամիտ և ուրախ , տը-
ւեալ զինքն 'ի գործունեայ զբաղմունս :

Թէ և չէ որ ազատ յայս կրից , կամ
կարող մերժել յինքենէ զայն , բայց
բարեխառնութիւն մտաց և գործու-
նեայ զբաղմունք օգնեն մեզ , 'ի չա-
փաւորել զտրտմութիւն մեր , առ 'ի
զերծ մնալ 'ի նորին բուռն ներգոր-
ծութենէ վնասու առողջութեան .
քանզի 'ի ձեռս մեր է և կախի 'ի կա-
մաց մերոց : Այլ թէ ցանկամբ ընտրել
ուրախ և զուարճարար ընկերակցու-
թիւնս , կամ զբաղեցուցանել զմեզ
'ի զօսալի տեսարանս և 'ի գործու-
նեայ խաղս . եթէ երթամք յօտա-
րութիւն , կամ պարապիմք յարուեստ
ինչ գիտութեան , 'ի գրել կամ յըն-
թեւնութիւն զայնպիսի ինչ , որ գրաւէ

միանգամայն զուշագրուած իւրն մեր . եթէ նստեալ ՚ի խորշ տան թաղծու . թեամբ և տրամուծեամբ անցուցա նեմք զկեանս մինչեւ ՚ի մահ , յամե նայն ժամ ՚ի կամս մեր է ընտրել զբա րին և ՚ի բաց կալ ՚ի չարէ :

Իսկ չար քան զամենայն է , զի տա րաբաղդք ոմանք յորժամ ըմբռնին ՚ի տրամուծիւն ինչ , տան զինքեանս ար քեցուծեան , կարծելով թէ այսուիկ գտցեն զդիւրուծիւն ցաւոյն , զի այս առաւել մնաստիար է քան զայլ վը տանգաւոր հիւանդուծիւնս . զի յաւ ւելլու ընդ տրամուծեանն նաև զկո րուստ ընչից և ստացուածոց , և աւեր անուան , պատուոյ և կենաց :

Սէր :

Սէրն , ըստ փորձոյ , է հլօրադոյն քան զամենայն կիրս . զի յորժամ սաստ կանայ , չիք առարկայ ինչ , ոչ միտք , ոչ կամք կամ խիստ բռնուծիւն , զի կա րիցեն սանձել զայն :

Նշրկիւ զ , բարկուծիւն և այլ կիրք են վասն պահպանուծեանն հատին , այլ սէրն է վասն շարունակելոյ զտե սակս , վասն որոյ իրաւամբ ասի թէ՝ արմատ սիրոյ է խոր ՚ի սիրտ մարդկան :

Թէև սէրն կարի զօրաւոր է , բայց չէ այնպէս երազընթաց , որպէս լըւար զբարկուծենէ և զայլ կիրք . քան զի սակաւք ՚ի միում նուագի անկա նին յանդոյս սէր ինչ . վասն որոյ ամե նայն որ պարտ է քաջ զմտաւ ածել , և նախ քան զնուաձին իւր ՚ի սիրոյ բարեպէս դիտել հաւանականուծե , եթէ կարող իցէ ժառանգել զառաք կայն ցանկուծեան իւրոյ , բայց երբ կարծիցէ թէ անհնար է , փուծապի ՚ի բաց կալ յամենայն պատճառաց , որոյ հնար է առաւելլու զընդունայն սէր

իւր , այսինքն՝ առժամայն փախչիլ յընկերակցուծենէ սիրական առաք կային և զբաղել զմիտս ՚ի գործ կամ յուսումն ինչ և զհետ լինիլ պէտքս զքօտանաց և խաղաւց , կամ գտն գոր ծել դտանել զայլ առարկայ սիրոյ , զոր հնար իցէ նմա ՚ի ժառանգել :

Չիք կիրք , առ որ մարդիկ այնչափ հակամիտեալ են , որչափ առ սէրն , բայց և չիք այլ կիրք այնչափ վտանգաւոր և մնաստիար , որչափ սէրն , յորժամ չէ սրբազան : Օ՛ի ոմանք առնեն ըղ սէր լիկ վասն զքօտանաց , և ոմանք եւս ՚ի զեղծ բաղձանաց , որք բաղում անգամ հրապուրեալ զգեղեցիկս խաչ տառակեն զհամեստուծիւն և զպա տիււ նոցա , որ է անտանելի անօրէ նուծիւն արժանի ամենայն դատա պարտուծեան :

Ի փորձառուծենէ յայտ է , զի ու րում մեք անձկանօք ցանկամք , նմին և դիւրաւ նուիրեմք զհաւատ մեր , այսպէս և ոմանք ՚ի գիւրահաւան գեղեցկաց սլաորեալ ՚ի կեղծեալ սիրոյ , բաղում անգամ անկանին յայնպիսի դառնաղէտ վիճակ , որ խկապէս ցաւալի է , զի այսպիսիք կուրացեալ ՚ի սիրոյ՝ ոչ որոշեն զպատրուակեալ սէրն յիսկականէն , այլ ՚ի բանիլ աչացն՝ տե սանեն զինքեանս անկեալ յանելանելի չարիս :

Յորժամ սէրն ժամանէ ՚ի ծայրա գոյն աստիճան , չիք նմա այլ դար ման , բայց միայն ժառանգել զսիրե ցեալ առարկոյն , վասն որոյ պարտ է իւրաքանչիւր ումեք յամենայն ժամ ջանալ յաղթել սիրոյ :

Օ՛ դուշուծիւն ծնողաց յընտրել զաւակաց զամուսնական վիճակ , բա զում անգամ նսխատելի է յոյժ : Օ՛ի նարատակ ծնողաց է միշտ առ բարե պատեհ հարսնացու , մինչ զի զաւա կունք իւրեանց բաղում անգամ չար

չարին իբրեւ զճշմարիտ նահատակ ՚ի մէջ հակամիտութեան սիրոյ և ծնողական պարտուց :

Գլխաւոր մտադրութիւն ծնողաց տնօրինելոյ զամուսնութիւն զաւակաց , է հաւաստել զթոժարութիւն և միտումն նոցին առ բնորեալն : Եւ ուր բոտ արժանեոյն փոյթ տարցի տյամ , անդ յոյժ սակաւ լծակիցք ապերժանիկ լիցին . և եթէ տարաբաղ դաբար դիպեացի նոցա ձախող վիճակ կամ կորուստ բարոյական բարուց և համբաւոց , այն ցաւեսցին ծնողք , բայց ամենայն իրաւամբ ազատ լիցին ՚ի մեղադրանաց խստութեան :

Կրօնա-որական խաղճո-թիւն :

Ինչո՞ւմք ՚ի կրօնաւորական դասուց մտորեալ յանհետեւ կարծիս , ուրախ լինելն համարին անտանելի մեղք ինչ , զի երեւակայեն՝ կրօնաւորութեան կայացեալ գոլ ՚ի կարի խստամբեր կեանս , ՚ի հրաժարման հաճելոյ զկամս , եւս և կարի անմեղ զբօսանօք : Այլ , որպիսի թախանիք սիւսին ՚ի դէմն նոցա , յորժամ միտք նոցա վարանեալ են ՚ի բաղմայոյ խորհուրդ սոսկալի մեղաց : Օ՛ի ամենայն գեղեցիկ նարատակ յաջոս նոցա են անպիտան ինչ , և ամենայն զսւարձալի տեսարան բնութեան երեւին նոցա սարսափելի : Չիք ինչ բերկրալի սուարկայ , որ չէ նոցա դարձելի . և ոչ չքնաղապէզ կերպարան և քաղցրանուագ ձայն , որք չեն նոցա զզուելի . կեանք նոցա է դառն և անտանելի բեռն մի , զի տպերժանիկ թշուառականքն կարծեն թէ չիք այլ ծանրագոյն մեղսամած չարիք , քան զոր ինքեանք զբան և կրեն , որք և բազում անգամ յուսահատեալ կըտրեն զթել թշուառ կենաց իւրեանց :

Այլ , կարի դառն է և ցաւալի յոյժ էթէ կրօնաւորութիւնն խոտորեցի ցայն աստիճան՝ յորմէ ծնանիցին այսպիսի անտանելի չարիք . մինչդեռ կարգեալ է այն հոգեւոր գեղ բժըշկութեան ամենայն ցաւոց և միւլթարիչ ամենայն արտմութեանց , քան զի չիք ինչ գերագոյն բարի առ բարօրութիւն մարդկան , քան զճշմարիտ կրօն ուղիղ տեսութեամբ շտուգեան . զի ամբառնաց զմարդ , որ ուխտիւք նուիրեալ է նմա զանձն իւր , ՚ի վտեմութիւն մտաց և ՚ի քաջալերութիւն վշտաց և անձկութեան սրտի , եթէ երբէք գայցեն ՚ի վերայ :

Կրօն Լստուածապաշտութեան ուսուցանէ մեզ , թէ աներկմիտ հաւատով և համբերութեամբ տանիլն նեղութեան , վշտաց և տառապանաց՝ է հանդերձիչ երջանկութեան հանդերձեալ կենաց , և որ անխոտոր մնացէ ՚ի շաւիղ այսր առաքինութեան , ժամանեցէ առ կատարեալ երանութիւն յաւիտենական կենաց :

Արոց կարգեալ են ՚ի պաշտօն քաւորօղելոյ մարդկան զաստուածապաշտութիւն , պարտին ամենայն զգուշութեամբ ՚ի բաց պահել զոր ՚ի կորի մթին և յառապար ճանապարհէ , զի մի խոտորեալ նորա անկանիցի յանելանելի խորխորատ կողատեան . զի խաղաղութիւն սրտի և անդորրութիւն մտաց , որ է ազգումն ճշմարիտ աստուածապաշտութեան , է առաւել զօրաւոր ձեռնարկութիւն ՚ի յօժանդակել հաւատացելոց զբարիս՝ քան ՚ի ցուցանել զհա և գերկիւղ գառաւ պարտութե մեղաց : Ճշմարիտ է , զի հնար է ահիւ և երկիւղիւ երկեցուցանել զոր ՚ի բաց կալ յերեւելի չարեաց . բայց ոչ ազգէ ՚ի սիրտն բնաւ ճշմարիտ սէր Լստուծոյ , զի ճշմարիտ սէր Լստուծոյ կայանայ ՚ի ճշմարիտ

մարդասիրութեան , յիրաւախոհութեան , յարդար կամս , ի հեզս և ի խոնարհս :

Այս ողորմելի վիճակ է և նոցին որք ըմբռնեալ են ի ջղային ախտ և ի սեւամաղձային թաղծութիւն . ուրոյ չիք այլ բարեգոյն միջոց կամ եղանակ ընդդիմանալոյ , այլ և այլ կրից յիշատակելոց ի վեր , բայց միայն պահել զմիտս ի խորազննին հետազօտութեան պիտանաւոր իրաց , կամ կրթութել զինքն և առնուլ զուարճալի ըզբօսանս և զգործունեայ զբաղմունս , որպէս գրեցաք զորոտմութենէ :

ԳԼՈՒԽ ԺԳ .

Հասարակ արտաթորումն մարդոց

Հասարակ արտաթորումն մարդկային մարմնոյ են այսոքիկ , մաքրութիւն որովայնի , մկզումն և քրքատունք :

Յայսցանէ , եթէ մին և եթէ միւսն յորժամ ընդ երկար մնասցէ ի մարմնի , պատճառեցէ մնաս առողջութեան , այսինքն թթութեամբութիւն , կծութեամբութիւն , փքածութիւն , նեխութիւն , և այլն , զորոց խօսեցուք առանձինն :

Սպորտիւն որովայնի :

Այնչ այնչափ օգտէ առողջութեան , որչափ պահել զանձն կանունաւոր : Յորժամ կզկզանքն մնասցեն ընդ երկար յաղիս , ապականին հիւթք մարմնոյ , և յորժամ արձակեցին կարի փութով , մարմինն պակասի ի զօրութենէ սննդեան , զորս ի կանունել պատշաճապէս՝ հարկաւորի ի

կանոնել զկերակուրն , զննջելն և գրել խաւորապէս զկրթութիւնն : Քանզի յորժամ մարմինն է յանկանոն դրութեան , ոչ մին և ոչ միւսն կատարէ զեւր գործադրութիւն ըստ պատշաճի :

Որք ուտեն և ըմպեն յանկանոն ժամու , կամ որք ուտեն զանազան տեսակս կերակրոց , և ըմպեն զպէսպէս զօրաւոր հեղուկս յամենայն ճաշու , միակն ունիցին երբեք եթէ նոցին մարսողութիւնն բարեղք իցէ և մաքրութիւն որովայնին կանոնաւոր լիցի : Այնպէս և ըմպելուն խանգարեցէ զամենայն կենսական զօրութիւն մարմնոյ , որով պատճառին պէսպէս հիւանդութիւնք :

Կարի շատ և կարի նուազ կերակուրն ունի միշտ մնասակարներգործութիւն . քանզի կարի շատ կերակուրն պատճառէ որովայնալուծութիւն , և կարի նուազն՝ սնդութիւն որովայնի . երկուքն եւս մնաս են առողջութեան :

Կարի դժուարին է ի հաւաստել զճիշտութիւն մաքրութեան որովայնի , որ իցէ պատշաճ առողջութեան , յազագս տարբերութեան հասակի և կազմուածոյ մարդոյ . կամ թէ գուրով ի մի և նոյն հասակի և ի կազմութեան՝ այլ զանազան ի կեցութիւնս , այսինքն կելով միշտ զգոյշ և չափաւոր ի կերակուրս և փոյթ առ կրթութիւնս : Սիպն վասն չափահասից հասարակապէս յաւուրն միանգամ բուրական է . զի աւելի կամ պակաս քան զմին է նշան անառողջութեան :

Այս ընդհանուր կանոն ընդունի զբաղումն ընդդիմութիւնս , քանզի են որք ոչ ելանեն արտաքս աւելի քան միանգամ ի շաբաթն , բայց վաղեմն զկատարեալ առողջութիւն . սակայն մինչեւ ցայս աստիճան կոր

դուլթիւն որովայնի չէ խալառ ան վտանգ, իցէ թէ առ ժամանակ ինչ վայելեացեն զչափաւոր առողջութիւն այլ 'ի վերջոյ գուցէ գտցեն զպէսպէս հիւանդութիւնս, այսինքն անմար սուլթիւն, կորուստ ախորժակի, ուռոյց ոտից, և այլն:

(Յաջողակ միջոց կարգաւ արուսթս ելանելոյ յամենայն աւուր՝ է յառնել 'ի քնոյ առաւօտուց, և առնուլ ըզկրթութիւն 'ի բաց օդի. քանզի միւնալով յանկողնոյ ընդ երկար, ոչ միայն արգելու կանոնաւոր մաքրութիւն որովայնի, այլ և ջերմութիւն անկողնոյն յորդելով գքրտունս՝ նըռազէ զայլ արձակմունս:

(Սմանք առ 'ի դիւրել զպնդութիւն որովայնի՝ սովոր են առնուլ զլուծողական դեղորայս. բայց այս սովորութիւն բազում անգամ սուերէ զկաղմուած նոցին. քանզի լուծողական դեղն ստէպ 'ի կիր առեալ նուազէ զաղիս և զմարսողութիւն. և յիւրաքսնչիւր նուազ առեալ դեղն՝ բանայ զճանապարհ վասն միւսոյ և 'ի վերջոյ պարտաւորին առնուլ զայն յամենայն օր իբրեւ զճանապարհորդական հաց: Այլ բարեգոյն է այսպիսեաց բառնալ զայրն դուլթիւն որովայնի կերակրով քան դեղով, այսինքն:

'Նախ՝ պատրաստ կալ յամենայնէ, որ ունիցի զպնդողական կամ ջերմ բնութիւն. և երկրորդ՝ զգենուլ ըզնուրբ և զօդամուտ զգեստս:

Կերակուր նոցա իցէ եփեալ կամ խորովեալ խնձոր կամ տսնձ, շոր, չամիչ, եւս կարագ, մեղր, շաքար, արգանակ ընդ զոմենի կամ այլ կակղացուցիչ դաւարեաց, և պէսպէս դաւարիք և դիւրամարս պտուղք: Իսկ ըմպելիք նոցա լիցի լոյծ բնութեամբ, այսինքն հում կաթն կովու, շիճուկ կաթին, շաքարաջուր, և այլն, այլ

բնաւ մի ըմպեցի ցքի մոգերա, պօրտոյ և կարմիր գինի, այլ միայն թեթեւ և չափաւոր գարեջուր:

(Այլ այնքիկ որք նեղին 'ի ըստէպ լուծմանէ որովայնի, պարտին յարմարել զկերակուր իւրեանց ըստ որպիսութեան գանգատանացն. այսինքն 'ի կիր առնուլ զայնպիսի կերակուրս, որոց իցէ զօրութիւն պնդելոյ՝ և կարողացուցանելոյ զաղիս, որք են սպիտակ և լաւ եփեալ հաց, պանիր, պինդ խորշեալ ձու և կաթամբ եփեալ որիզ: Իսկ ըմպելի նոցա իցէ պօրտոյ և կարմիր գինի, սակաւ ինչ բրանդ խառնեալ ընդ ջրոյ:

(Այս ստէպ լուծողութիւն բազում անգամ արգելու գքրտունս, որ մնաս է լուծողութեան, վասնորոյ հարկ է զգենուլ զջերմ և գքրտնաբեր զգեստս:

(Երրորդն է:)



(Սեր բաղմերախոթ թարգմանիչ սուրբ Հարց վրայ գրուած սոյն ոտաւնաւորը՝ թէպէտ նոցա անուան յիշատակի օրը սուրբ Աթուոյս ուսումնարանին մէջ կարդացուած և մեղ յանձնուած էր հրատարակելու համար, բայց կարեւոր նիւթերու յաճախութիւն պատճառ դարձաւ մինչ ցարդ յետ մնալուն, այլ երախտագէտ սրտի՝ արդիւնք լինելուն համար արժան կը համարիմք այժմ (թէ և ուշ) հրատարակել:

Ի ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻԶՍ ՄԵՐ ՍԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՎԲ

ԱՌ ՀՐԵՇՏԱԿՆ ՄԱՍՍԵԱՅ

Ա. Պարն. — Ուստի՛ Սերուբ գու զուարթուն
Գաս խրախամիտ թեւասար .

Ջրնչ ՚ի Մասսեաց, ոգիդ անբուն,
Ունիս նոթճել մեզ այսօր :

Ո՞հ Ա. Պարնէն. — Եկայք մանկունք Հայկեան զարմիս ,
Ջերմ սէր ՚ի սիրտ յակումբ ասնիս :

Բ. Պարն. — Որդիք եմք մեք Սուրբ Գրիգորի ,
Արթուն հովուին հսկողի .
Խուն ինչ առ մեզ ծն հաճեսցիր
Յապաղել արդ վայրիկ մի :

Այլ ՚հ Բ. Պարնէն. — Ենթացրեաց՝ եմք լսել յօժար
Քային ձայնի սիրավառ :

Ա. Պարն. — Լսա՛ մեզ բան , հրեշտակ սիրուն ,
Ըշտարադիր հէգ Հայոց ,
Կրբե՛ն արդեօք զոգի սուրբ Հարց ,
Վեհ՛ Սահակայ Մեսրոպայ :

Ո՞հ Ա. Պարնէն. — Սահակ Մեսրոպէ մեր բարերարք ,
Ասքանաղեան տոհմիս են փառք :

Բ. Պարն. — Օրոց անմահ ըզյիշատակ
Խմբեալ տօնեմք մեք այսօր .
Իցէ՛ եւ առ Խիսուր շիրմօք
Տօնակատար Հայ սիրտ ոք :

Այլ ՚հ Բ. Պարնէն. — Երախտագէտ են սիրութ Հայոց ,
Ուր թէ չիցէ շիջեալ այն բոց :

Ա. Պարն. — Ո՞ր ապաշնորհ այն իցէ Հայ ,
Որ ոչ ՚ի սիրտ դրոշմեսցէ
Ջանմահ անուն վեհից Սրբոց ,
Բարերարաց Հայ ազգիս :

Ո՞հ Ա. Պարնէն. — Օրհնեալ են միշտ Սահակ Մեսրոպէ ,
Օրհնեմք յաւերժ սիրաբորբոք :

Օրհնաբնէն. — Օրհնեալ էք եւ դուք ,
Ո՛ր Հայկայ Մանկունք .
Օրհնեալ որ զգայք
Ըզսէր անապակ :

Այգ ձեր տարագիր
Կան հետաքրքիր .

Ձեր մընան երկոյ

Կըթեւ խայրիս հոծ :

Պայլք յամեն ուտոք

Մտեալ 'ի վարախ՝

Գիշատեն զանմեղ

Գառինս ձեր , աւանդ :

()ն տօնեցէք սիրով սուրբ զյիշատակ ձեր Նախնեաց ,
Եւ դրոշմացի խոր անեղծ 'ի ձեզ անուն վեհազանց ,
Նմանելով դուք նոցա՝ գործոց , վարուց , հաւատոց ,
Փութով օգնէք Ձեր Ազգին , որ հառաչէ խոր հոգւոց :

Բ. Պարն. — Կարդաց ահա զիւր պատգամ ,

Բանբեր զուարթունն եւ գընաց .

Օ՛ն փութասցուք եղբարք իմ

Մխել արագ ձեռն 'ի գործ :

Այլն Ա. Պ. Աւարդ. — Սուրբ Սահակ եւ Մեսրոպ ,

Ձեզ ներբողից արգադիր

Հիւսք պսակաց ձօնեսցուք .

Ըզձեր ջանից անգին ձիր ,

Հռչակ դարուց մեք հարցօւք :

Ա. Պարն. — Ի ռուսապայծառ Մասսեաց Արփիք ,

Ձերոց շաւղաց եմք հետամուտ .

Օ՛ն մեզ օձան լինել արիք ,

Յայս մեր հանդէս ճեպեցէք փոյթ :

Ո՞ն Ա. Պարն. — Ո՛վ սուրբ Սահակ եւ Մեսրոպ ,

Որ 'ի խորանըս լուսաճեմ

Հսկէք արթուն 'ի սէր սուրբ ,

Զանմահն ընդ մեզ հաշտեցուցէք՝

Ազերսարկու կացեալ միշտ :

Բ. Պարն. — Ձերով շնորհիւ գերզգօն Հարք ,

Ազգ մեր թշուառ գտաւ արժան

Ի ձեր ճգանց ընդունիլ լոյս ,

Ըզտառս անգին տոհմիս Հայկեան :

Այլն Բ. Պարն. — Ձեզ եմք յաւետ շնորհապարտ ,

Ո՛վ սուրբ Սահակ եւ Մեսրոպ .

Ձեզ ներբողից արգադիր

Հիւսք պսակաց ձօնեսցուք .

Ըզձեր ջանից անգին ձիր

Հռչակ դարուց մեք հարցուք :

Ա. Պարն. — Իսո արժանի անշուշտ ձերոց

Անխոն ջանից 'ի սէր Ազգին

Ըզորիտուն ընկալայք հոծ
Յանանց 'ի փառս Ողիմպոսին :

Ո՞հ Ա. Պարո-էն . — Երախտագէտ զգայմանց
Եւ մեք շարժեսլ սիրազգած ,
Ըզիշատակ Ձեր անուանց
Աստ կատարեմք անմոռացի .
Օրհնեալ էք միշտ Հարք հարանց :

Բ. Պարո . — Ի լուսափայլ եթերին կայս
Անճառ լուսով Վեհ բարձրելոյն
Գեղազարդեալ պճնիք 'ի փառս ,
Ծծէք զանմահ ըզկաթն Հոգւոյն :

Այլ ո՞հ Բ. Պարո-էն . — () րհնեալ Մեսրովք եւ Սահակ ,
Որ առ շնորհացն աթոռով
Կայք աներկիւղ համարձակ ,
Անկցին 'ի մեզ Ձեր գորով՝
Ժտել շնորհս վասն մեր :

Ա. Պարո . — Հայցեմք 'ի ձէնջ մեք սիրավառ ,
Հայեցարուք յայս հարկ խոնարհ .
Յոր համերամ վեհք եւ մանկունք
Ի մի ժողով կամք գումարեալ :

Ո՞հ Ա. Պարո-էն . — Կամք եւ օրհնեմք զՁեր անուն ,
Նախանձաւոր Ձեզ եմք համբուն :

Բ. Պարո . — Ի յիշատակ անմահ երկոցդ
Կթող 'ի սիրտ կոփեալ կանգնեմք ,
Որ անսխեղձ կօցցէ անդէն
Դարուց 'ի դարս միշտ անյողդողդ :

Այլ ո՞հ Բ. Պարո-էն . — () րհնեալ Սահակ եւ Մեսրովք ,
Դէմք 'ի ժպիտ սիրտ 'ի տրոփ ,
Ըզձեզ գովեմք համախումբ :

Ա. Պարո . — Տուք մեզ ոգի 'ի Ձեր ոգւոց :
Լինել արժան Ձեզ Հարցդ որդիք ,
Ըզձեր աւանդ տառից սրբոց
Բաղմաբեղուն տունել կամիմք :

Սիւսեան . — Ձեզ եմք յաւէտ շնորհապարտ ,
Սուրբդ Մեսրովք եւ Սահակ .
Ձեզ ներբողից դրուատիք }
Հրնչեսցեն մեր դայլայիկ :
Ձերոց քրտանց ձօն քաղցրիկ ,
Առնեն ըզմեզ երջանիկ .
Բարերարաց եմք որդիք ,
Լիցուք եւ մեք միշտ բարիք :

ՀԱՏԸՆՏԻՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ
ՎՐԱՅ

Այն անհատի մէջ զարգացնել այն կատարելութիւնը, որուն ընդունակ . այս է անհատաւարակութեան նպատակը :

Կատարեալ մարդը նա է, որ կ'ապրի կրօնական և ընկերական կեանքով, միանգամայն և կը յառաջէ 'ի ճանապարհի (Նստուծոյ և բնական լուսոյ : Կրօնական և բնական լոյսը մարդկան մէջ վառելու և ծաւալելու համար՝ հարկաւոր է դաստիարակութիւն, և դաստիարակութիւնը մայրական անժըխտելի ազդեցութեանն կախում ունի : Այսն զի դաստիարակութեան սուրբ կանթեղը պէտք է որ նախ մանկան որրանի մօտ վառուի և ապա դպրոցներու մէջ :

Երկրին օգնելու և ժողովուրդը վերականգնելու համար՝ ոչ թէ թագաւորները և թագուհիքը կոչելու է, այլ մայրական ազդեցութիւնը և ապա վարժարաններն ու համալսարանները : Այսն զի մօր ազդեցութիւնն է, որ կը ներդրածէ սրտի վրայ, և սրտի ուղղութեամբ է որ կ'ուղղուի միտքը . և անա ժողովուրդն եւս փրկուելու և նորոգուելու համար՝ ուրիշ կարօտութիւն չունի, եթէ ոչ ուղղութիւն սրտի, ուղղութիւն մտայ :

Դաստիարակութիւնը պէտք է որ երեւի ընտանեաց մէջ, ինչպէս պարտաւորութիւնը Սպարտայի՝ և հայրենասիրութիւնն Հռովմայ մէջ : Եթէ հայրենասիրութիւնն հերոսներ և դիւցազուններ կը ծնանի . ճշմարտութեան սէրն եւս կը ծնանի լուսաւորութիւն հանուր մարդկութեան :

Դաստիարակութեան մէջ ծածկը ուսած է մարդկային ազգի երջանկու-

թիւն և կատարելութեան խորհուրդը :

Դաստիարակութեամբ կը մեծնան մեր մտածմունքներն ու խորհուրդները և կը սրբին մեր կիրքերն ու յօժարութիւնները . հանճարը կը ծառագայթի մեր մտաց մէջ, առաքինութիւնը՝ մեր կամաց մէջ և սէրը՝ մեր սրտի մէջ : Եւ անս սոյն կեանքն է մարդոյ ճշմարիտ կեանքը, հոգին է մարդն, մնացածն ոչինչ է :

Դաստիարակել և զարգացնել հոգւոյ կարողութիւնքը . անս այս է մարդկութեան միակ և ճշմարիտ շահը, որ թագաւորին կարեւոր է՝ իւր գահոյից վրայ, գործաւորին՝ իւր աշխատանաց մէջ, եկեղեցականին՝ իւր պաշտօնին մէջ, ժողովրդին՝ իւր ամեն տեսակ գործոց և ընկերական կենցաղավարութեան մէջ :

Ինքնականութեան կարողութիւնքը կ'աճին մեր աշխատանքով, հոգւոյ զգացումները՝ մեր կամքով, իսկ երկրաւոր ցանկութիւնքը՝ մեր թուրութեամբ : Աստի հաստատուն կամքն ու աշխատանքն են, որով կարող ենք յաղթել ամեն բանի, ինչ որ անարժան է մեր մարդկութեանը :

Դաստիարակին երկու մեծ պայմաններ պէտք են — Սիրել և Եղբայրել . սիրել մանուկները՝ Բրիտանիոյ նման և իւր ամեն կարողութեամբ աշխատիլ նոյա բարոյական և մտաւոր զարգացման համար : Անս այս է դաստիարակութեան ըովանդակ կանոնը : Այլ չափ դիւրին են սիրոյ համար առաքինութիւնները, որչափ գեղեցիկ են զոհողութիւնքը : Ով որ սիրել գիտէ, նա զօրաւոր է . ով որ սիրել գիտէ, նա սուրբ է . ով որ սիրել գիտէ, նա ամենայն ինչ կարող է գործել, ամեն նեղութիւն կրել և ամեն զրկողութեան համբերել :

Լ՝մեն ուսանող և ուսուցանող մարդ՝ մեծ է : Լ՝մեն իւր ոյժը և կա-
րողութիւնը գործ դնող մարդ՝ զօրա-
ւոր է և անյաղթ : Բայց այն եւս
պարտինք գիտել, որ Լ՝ստուծոյ հետ
միանալով միայն մեծ ենք մենք . իսկ
Լ՝ստուծոյ բաժնուած ժամանակ՝ ոչ
ինչ :

Լճետարանը իւր աշակերտները
ազատեց ճշմարիտ լուսաւորութիւն
ուսուցանելով, դաստիարակութիւնն
ու տպագրութիւնը կարող են աշ-
խարհը ազատել Լճետարանի լոյսը
ծաւալելով և պաշտօնանելով :

Ղշմարտութեան գիտութիւնը
բաւական է միայն մարդը երջանկա-
յնելու համար :

Օ էնքով և արիւնով գնուած ամեն
փառք ունայնութի է և ցնորք : Լ՝յա-
պէս են փառք Լճարներու, Լ՝աբօլէոն-
ներու, Լ՝իյոմներու և այլոց : Լճ դաս-
տիարակութեամբ ու կրթութեամբ
ստացած փառքն է միայն ճշմարիտ
փառք : Եւ որ մարդկութեան հոգին
կը զննուորէ, նա մեծ գործ կը գոր-
ծէ . իսկ ով որ մարմինը կը զննուորէ
Չինգիսիսանի և Լճնկթէմուրի փառք
միայն ժառանգել կը ձգտի :

Եւ ազգ կամ ժողովուրդ լու-
սաւորուելով միայն կը մեծնայ և ոչ
թէ մարդկային արեան հեղեղներ
թափելով : Լճգեր կան, որ իրենց ա-
պագայն ապահովելու համար՝ իրենց
զօրագունդները և թնդանթները կը
հաշուեն : Բայց էական ապահովու-
թեան համար, հարկ է զննել, հարկ
է հաշուել թէ ազգ մի քանի լու-
սաւորեալ մարդ ունի . վասն զի երկ-
րի և ազգի ճշմարիտ զօրութիւնը
մարդն է, դաստիարակեալ և կրթեալ
մարդն :

Լճեն երկիր, որ չառաջեր կրթու-
թեամբ, յետս կը դառնայ : Լճանց

լուսոյ՝ ազատութիւնը անխլանու-
թիւն է : Լճանց ազատութեան՝ լոյսը
ճնշումն է : Լճայ մարդկութեան դաս-
տիարակութիւն, կայ մարդոց դաստի-
արակութիւն : Լճարդկային ցեղը
պարտ է հաստատուն քայլերով յա-
ռաջագիմել գէպ ի մի ամենամեծ կրթ-
թութիւն, գէպ ի մի ամենամեծ ա-
զատութիւն : Լճնարին է անհատի
ազատութիւնը բռնաբարել, առանց
ընդհանուրի ազատութիւնը բռնա-
բարելու : Լճան զի ազատութեան ի-
րաւունքը հասարակաց է . և եթէ
այսպէս չը լինէր, իրաւունք չէր լի-
նիր, այլ արտօնութիւն կամ առանձ-
նաշնորհութիւն :

Եւ որ կը ցանկայ ճշմարտապէս ա-
զատ լինիլ, իւր զօրութիւնը ճշմար-
տութեան վրայ հիմնելու է : Լճեն
մարդիկ կը պատերազմին, և եթէ
հաւասար զէնքով անգամ պատերազ-
մին, մենք կը հաւատանք, որ յաղ-
թանակը ճշմարտութեան կողմին
պահուած է :

Ղշմարտութիւնը վարագուերող
խաւարն է մեր կիրքը և սնտիապաշ-
տութիւնը : Լճս խաւարը փարա-
տելու համար՝ կրթութիւն և դաս-
տիարակութիւն պէտք է :

Լճատութեան վերջնագագաթը
հասնելու համար՝ զննուց արգասիք
ազատութիւնը արհամարհելու և
դաստիարակութեան արգասիք ազա-
տութիւնը ձեռք բերելու է :

Լճարդկային ամեն տիարութիւն
ներէն տիարը հոգւոյ թմբութիւնն
է : Լճայ այն մարդուն, որ կ'անցնի
աշխարհէս, առանց արթննալու :
Լճանի այն մարդուն, որ իւր բոլոր
կարողութիւնը կը նուիրէ թմբած հո-
գինները վարթուցանելու և զօրացնե-
լու համար :

Թմբած երկրագունտի վրայ իմառ-

տուն դաստիարակներն են այն ջա-
հերն, որոց լայր յարթութիւն կը
կոչէ բոլոր մարդկութիւնը :

Մարդիկ տակաւին այնչափ խեղճ
և ոգւորմելի են, որ արձաններ և կո-
թողներ կը կանգնեն դիշտողներու
և մութողներու համար, և կը մոռա-
նան այն բարերարները, որոնք կեն-
դանութեան շունչ կը փչեն անկեն-
դան թմրածներուն :

Այ բանա, ոչ կախաղան, ոչ օրէնք,
ոչ պատիժ կարող չեն աշխարհիս ու
ճիրները և անօրէնութիւնները վեր-
ջընել և հեռացնել, այլ միայն բարի
դաստիարակութիւնը :

Այն ժողովուրդը կամ աղքատ մահ-
չունի, որ իւր փառքը և մեծութիւ-
նը կը թուծեան մէջ կ'որոնէ : Այս-
պիսի ժողովրդի համար մի կանոնա-
ւոր դպրոցը նախապայտիւ է բազմա-
թիւ զօրանոցներէ, վասն զի, զինա-
վարժութեան հիմնադիրն է մարդաս-
պանութիւնը, իսկ դաստիարակու-
թեան հիմնադիրն է մարդոց բարոյա-
կան և մտաւոր կենդանութիւնը :
Ս'իսն կէտ նպատակին է մահը, իսկ
միւսոյն՝ կեանքը :



ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆԱՆՑ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ զատիարակութեան
խնդիրը, որ, իւր կարեւորութեամբ,
խոհուն մտքերը գրեւոր խնդիր-
ներէն գլխաւորն է, քանի մի տա-
րիէն ՚ի վեր, մեր Աղգին մէջ բանա-
խօսութեան և գրութեան նիւթ է-
ղած է : Գովելով ամեն մարդիկ, ու
րոնք սոյն խնդիրը կը յուզեն, թէ և
տարբեր կարծիքներով, և երբեմն ար-
հաս խորհրդածութեամբ, արժան կը
համարին հետեւեալ Արեւախօսութեան

նը հրատարակել, որ 7 տարի առաջ
խօսուած է Արեւաշ աշխարհի՝ Պա-
րաբալու Սարիամեան՝ Իպրոցի բաց-
ման հանդիսի օրը, ՚ի ներկայութեան
Զանկայիշատակ Ա. Առաջնորդին (Ստե-
փանոս արքեպիսկոպոսի) և բազմաթիւ
հանդիսականաց, արանց և կանանց : Սոյն
Արեւախօսութեան իւրաքանչիւր որ կա-
րող է տեսնել թէ ս'ի կէտէն նկա-
տած է բազմահմուտ հեղինակն՝ Պ.
Հանչեանց՝ կանանց սեռի դաստիա-
րակութեան խնդիրը : Եւ որովհետեւ
ուղիղ և ճշմարիտ տեսութեամբ հե-
ղինակուած ամեն երկասիրութիւն՝
մահ չունի, և ամեն ժամանակ կարելի
է կարդալ և շահիլ, ուստի և մենք
կարեւոր կը համարինք ընթերցողաց
ուշադրութիւնը սոյն Արեւախօսութեան
վրայ հրաւիրել :

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ,

ՊԱՐՈՆԱՅՐ,

ՏԻԿԱՅՐ,

ԹՈՅԼ ՏՈՒՔ ինձ այսօր՝ հրաւի-
րել ձեր ուշադրութիւնը մի ա-
ռարկայի վրայ, որ կենդանի կապով
կապուած է կանանց լուսաւորու-
թեան այս հագեւոր տաճարի հետ,
զոր դուք այսօր գումարուած էք հիմ-
նարկելու : Թոյլ տուք ինձ այսօր՝ խօ-
սիլ այն ազդեցութեան վրայ, զոր ու-
նին կանայք մեր կենաց վրայ և որոց
ձեռքն է, ոչ միայն երեխայից ապա-
գայն, ինչպէ՛ս առաց Սեմն Աբօղէ-
ոն, այլ և բոլոր մարդկութեան :

Կանանց այս ազդեցութիւնը կը
կրօի մեր մանկութենէն և կը շարու-
նակուի մեր բովանդակ կենաց մէջ :
Որոնք կը յանձնէ բնութիւնն, մեր
կեանքը, եթէ ոչ մայրական սիրոյն :
Սարգն, որ Աստուածային Արարչա-
թեան զարդն է, յաշխարհ կուգայ՝
ամենատկար քան համօրէն արարած,

ներք : Հաղիւ թէ շունչ կ'առնու նա,
կը սկսի լալու ձայն հանել : Կարծես
թէ վայր ընկած է նա մի ամենամեծ
բարձրութենէ : Նա կը ճնշուի երկ-
րիւ օդէն , շնչառութենէն և իւր նոր
վիճակէն : Կալով կ'աւետէ նա իւր
գալուստն յաշխարհ , կը զարթուցա-
նէ կարեկցութիւն . բայց նա միայն
կարող է սփռիւ և հանդարտեցնել
նորա լացն , ով որ ծնած է զնա ցա-
ւով և հեծութեամբ : Ով կարող է
քաղցր ժպիտ զարթուցանել երեխա-
յին մէջ , եթէ ոչ մայրական ուրա-
խութիւնն , գորովն և բարեօրտու-
թիւնն : Ով կարող է գուշակել ե-
րեխայի հոգւոյ շարժմունքն , ով կա-
րող է գգուել և լուսաւորել նորա
խիղճն , եթէ ոչ մայրն :

Նայեցէք , թէ ինչպէս մայրն առ-
ինքն կը քարշէ զերեխայն , իւր գե-
ղեցկութեամբն , առոյգութեամբն և
առաւել քան զամենայն իւր սրտովն :
Մայրական համբերութիւնը կը գո-
հացնէ , կը լցուցանէ երեխայի անսահ-
ման հետաքրքրութիւնը : Մայրական
սէրն կը պահէ կը պահպանէ զերե-
խայն ամեն վնասակար բաներէ : Մայ-
րական սիրով կը թեթեւանէ երեխայի
վրայ ունեցած անչափ հոգացողու-
թեանց ծանրութիւնքն : Կամաց կա-
մաց երեխայի և մօր իրարու հետ խա-
ղալու և խնդարու ցանկութիւնը մի
նոր և գեղեցիկ կտայ կը լինի երեխայի
և մօր մէջ : Ամեն բանով կը կապուին
նոքա իրարու հետ , ինչպէս համա-
ձայնութեամբ , նայնպէս և ընդդիմու-
թեամբ : Այս սոյն մայրական գեղեցիկ
ձիրքով , որ է համբերութիւն և հըս-
կողութիւն , բնութիւնն ինքնին ցոյց
կուտայ մեզ յայտնապէս , թէ որո՞ւ
հաւատացած է մեր մանկութիւնը , և
ով է մեր երջանկութեան պատճառն :

Այո՛ , Տեառք , մայրական ազդե-

ցութիւնը կը գրոշմէ իւր կնիքը մեր
սրտի զգացմանց վրայ , մեր մտաց վրայ ,
մեր կենաց վրայ : Սեր հոգւոյ վրայ
եղած այս մայրական ազդեցութիւնը
մեր նախասահմանութիւնն է , ինչպէս
ասաց Սեճն Նաբօլէոն , « Երեխայի ա-
պագայն մօր ձեռքն է » : Հատ անգամ
կ'ասէր Նաբօլէոն , աւելի իւր մօրն
է պարտական , որ իւր կենաց մէջ
այնքան մեծութեան հասաւ : Մայրա-
կան ազդեցութեան տակ զարգացած
բացուած են բանաստեղծական երե-
ւելի ոգիներ և հանձարներ—Բայրոն ,
Լամարթին , Նիդրէ Հէնիէ , Հիւգօ ,
Հիլլեր և այլք : « Իմ մայրս տուաւ
ինձ , իւր կենդանի ուրախութեամբ ,
ճաշակ գրութեան , ճաշակ զբայո-
ղութեան , ճաշակ բանաստեղծու-
թեան » կ'ասէ Գերմանացի երեւելի
բանաստեղծն Գեթէ :

Այո՛ , Տեառք , միայն մայրը կարող
է տալ մեզ բանաստեղծութիւն և հո-
գի բարեպաշտութեան : Միայն նա
կարող է տալու որեւէ մեր մէջ առա-
քինութիւն և ուսուցանել մեզ , որ
բարիանունը նախապատիւ համարինք
գանձէ և հարստութենէ , լիզի եր-
ջանկութիւնը՝ մեր անձի երջանկու-
թենէն , սիրենք մեր ընկերները , օգ-
նենք տարաբաղդներուն , բարձրացը-
նենք մեր հոգին առ Լստուած , որ է
ազգիւր ամենայն գեղեցկութեան և
բարութեան : Եսացէք ինձ , ով դար-
ձայց զսուրբն Օգոստինոս առ ճշմա-
րիտն Լստուած , եթէ ոչ իւր մայրն՝
Սրբուհին Սնիկ : Ով դաստիարա-
կեց զսուրբն Սիկեբերան , եթէ ոչ
իւր մայրն : Ով հաստատեց զԼեսա-
րացին Բարսեղ փրկութեան ճանա-
պարհի վրայ , եթէ ոչ իւր մայրն :
Ով երեխայութեան ժամանակ լիե-
ղեցի բերաւ զԼստուածսբանն Գրի-
գոր և Լեստարանը ձեռքը տուաւ

չօշափելու, նայելու և սիրելու, եթէ ոչ իւր մայրն, որ կարծես թէ կը փափաքէր, կը ցանկար, որ շօշափելով ու նայելով ատուածային հոգին իւր զաւակի ջիղերն, երակներն ու սիրտը թափանցէ : Ի՞նչ ծնաւ ու զարգացոյց այն վեհ ու փափուկ Հայրենեաց զաւակները, այն առիւծի նման հզօր և գառան նման հեղ Վարդաշահն Նանց Վահատակները, եթէ ոչ մայրերն : Այս փափկասուն և փափկասիրտ մայրերն են, որոց զոհաբերութեան հոգին կը նկարագրէ մեզ քաղցրախօս Լիլիէն : Այսպիսի մայրերն են, որոնք կը ներշնչեն ոչ թէ այն անձուկ հայրենասիրութիւնն, որ միայն օտարն ատելու մէջ կը սահմանափակի, այլ սէրն անսահման, որ կը ծնանի մեր մէջ այն ատուածային զգացումն, այն եղբայրական համակամութիւնն, որ Վրդի բոլոր անգամներուն կուտայ մի սիրտ, մի հոգի, մի միտք, մի կամք :

Ինչպէս այսպիսի մայրերն կարող են ուսուցանել մեզ, որ մեր բնական աշխարհէն բարձրագոյն՝ կայ մի այլ աշխարհ, մեր հայրենիքէն բարձրագոյն՝ կայ մարդկութիւն, և մարդկութենէն գերագոյն՝ մեր սրաշաւու առաջին և սուրբ Եկեղեցի : Ի՞նչ որ իւր մանկութեան ժամանակ, դառտիարակ չէ ունեցած իւր մայրն, կարող է նա, այո, սրտի բնական շարժումով բարեպաշտութեան հասնիլ, բայց նորա առ Վրարիչն ունեցած յարաբերութեանց մէջ կը պակի, կարծես թէ, տեսակ մի ընտանեկան կապ, որ հիմն է քաղցր զգացմանց : Վասն զի մայրական փափուկ զգացմունքն չէ զարթուցած նորա մէջ սէր առ Վրարած :

Եթէ աշխարհիս մէջ մի ճշմարիտ բան կայ, այն կանանց ազդեցութիւն

նրն է մեր բոլոր կենաց վրայ : Այս ազդեցութիւնը կ'երեւի որդիական սիրոյ և ամուսնական կապի մէջ : Վարդը կը խորհրդակցի կնոջ հետ, կը հնարանդի իւր մօր կամբին, երկար ժամանակ կը կատարէ նորա կամքը, եւս և նորա մահէն զինի, և իւր մօրէն ստացած համոզումներն այնպէս կ'արմատանան իւր սրտի մէջ, որ շատ անգամ կիրքերն եւս անկարող կը լինին յաղթել այն համոզումներուն :

Այո, Տեառք, մի երկիր կարող է փոխել իւր օրէնքները, իւր կարգ ու կանոնները, բայց մի բան կայ, որ միշտ անփոփոխ կը մնայ կենաց մէջ, այն է կանանց հզօր ազդեցութիւնն մարդկանց բարուց վրայ : Եւրոպայի, թէ ազատ և թէ փակուած, նա միշտ կը պահպանէ իւր իշխանութիւնը մարդոց վրայ : Վասն զի, նա՛ իւր սոյն իշխանութիւնը կը ստանայ մեր սրտէն և մեր կիրքերէն : Կանանց սոյն ազդեցութիւնն, իրենց լուսաւորութեան աստիճանին համեմատ, կը լինի շատ կամ սակաւ օգտակար, աւելի կամ նուազ արդիւնաւոր, նայելով թէ մրջափ յարգանք կուտան նոցա մարդիկ : Եւրոպայի, թէ ամուսին լինին և թէ ստրուկ, միշտ իրենց կը նմանեցնեն զմեզ, կամ ազատ կամ ըստրուկ : Կարծես թէ՛ բնութիւնը կ'սրած է ոչ միայն մեր լուսաւորութիւնը՝ նոցա լուսաւորութեան հետ, այլ և մեր յարգանքը՝ նոցա յարգանաց հետ, ինչպէս և մենք կը կապենք մեր երջանկութիւնը՝ նոցա առաքի նութեան հետ : Այս է յաւիտենական արդար օրէնքն, ուր կինն անարգուած է, այն տեղ մարդն եւս կ'ընկնի անարգութեան վհի մէջ, իսկ ուր կինն կ'ընթանայ լուսոյ և ճշմարտութեան աղբարհաւ, այն տեղ մարդն եւս իւր նշանակութիւնն կըստանայ :

Այս խոսքերս ճշմարտերու համար, դարձնենք մեր աչքերը դէպ ՚ի քրիստոնէայ և ոչ — քրիստոնէայ ազգերը: Աւր պահած է մարդն իւր պատիւն: Աւր ծագիւած և զարգացած են հասարակութիւնք գիտութեամբ և արուեստիւ, եթէ ոչ այն տեղ, ուր կինն ամուսին է, և ոչ թէ գերի կամ ստրուկ, ուր հաստատուած է գերգաստան և ոչ կանանոց, ուր կինը մայր է, ուր ամուսնութիւնը սուրբ կոչ է և ոչ թէ ստրուկներու առուտուր:

Այսպէս, որչափ կամիս օտարաց մօտ արդար ձեւայիր և ազգատաց մօտ՝ ողորմած, եթէ չէս սեպհականներ քո կնոջ իրեն վայելուց յարգանքը, կարող չէս հոգեկան սէր պահանջել քո կնոջմէն քեզ և քո որդւոց համար:

Չրկայ այնպիսի ազգ, որ ունենայ ճշմարիտ կրօնք ու սիրէ զայն, և չը խոտորովանի կանանց ազգեցութեան մեծ նշանակութիւնը: Ճշմարիտ կրօնքը կը տարածէ լուսաւորութիւն, կը հաստատէ ամուսնութիւն, կը հառաւորէ ընտանեկան կեանք, յորմէ կախեալ է ընկերական, միաբանական և ազգային կեանքը: Այսին դի գերգաստանի մէջ միայն կը ծնին և կ'աճին բարոյականութիւն, համոզմունք, առաքինութիւն, միով բանիւ ամենայն մեծաննութիւնք և արժանաւորութիւնք մարդկային ազգի: Իսկ ընդհակառակն, ուր չը կայ ընտանեկան կեանք, ուր չը կայ ամուսնական սրբութիւն, ուր չը կայ կնոջ սուրբ ազատութիւն, ուր տիրած են բազմակնութիւն և ամուսնական անհաւատարմութիւն, այն տեղ թշուառ և անրոյս է ազգի միջակը, այն տեղ անբարոյականութիւնը ճարակած է մարդոյ բնակարանին մէջ, այն տեղ մեռած է մարդոյ հոգեկան կեանքը:

Մեռած են բազմազգ ազգայնութիւնք, մեռած են խիղճն ու բանականութիւնն և թագաւորած են միայն մարմնական հեշտախոտութիւնք: Այսին ամուսնութիւնն, քրիստոնէական սուրբ ամուսնութիւնն է, որ կը հալածէ մեղքերը և կը լուսաւորէ քրիստոնէի տունը:

Ար ցանկա՞ք և կամի՞ք, Տեառք, ի մանալ թէ ամենէն աւելի ինչ է պակաս մեր Հայրենեացն ու Ղզէին: — Հոգի զոհաբերութեան, հոգի մեծաննութեան, հոգի ազգասիրութեան: Անք ունինք վաճառականներ և գըրագէտներ, ունինք իշխաններ և աւտիճանաւորներ, բայց ՄԱՐԴԻՆ՝ շատ սակաւ, և աւելի սակաւ՝ ՀԱՅՐԵՆԱՍԻՔ: Այս բանիս, եթէ ոչ միակ, գէթ գիտաւոր պատճառն այն է, որ չունինք ՄԱՅՐԵՆ: Այ, կան մայրեր, բայց ճնշուած են նոքա նիւթական հոգսերով, խեղդուած են նիւթաւ պաշտ կեանքով: Չրկան այն մայրերը, որք կարողանային դասախօսակել իրենց զաւակները՝ քրիստոսի հոգւով զոհաբերութեան և անննութեան հոգւով, սիրով առ լստուած և առ ընկերն: Չրկան այն մայրերը, որք կարողանային իրենց հոգեւոր ծնընդեամբ բաղմացնել լստուծոյ և Հայրենեաց զաւակներ, ինչպէս իրենց մարմնաւոր ծննդեամբ կը բաղմացընեն մարդկային ազգը: Այս և կին լինելու համար՝ բաւական չէ միայն լինել անտես, հրամաններ տալ ծառաներուն և աղախիններուն և հաղալ միայն նիւթական բարօրութեան համար: Պէտք են այս ամենը, բայց միայն սոցա մէջ չէ կայացած նոցա կոչումն: Կանանց գիտաւոր կոչումն է՝ սիրել, աղօթել, մխիթարել: Նոցա կոչումն է՝ կրթել և առաջնորդ լինիլ իրենց զաւակներուն, և այս շնորհքը յատկապէս կանայք միայն ունին և

նորս կարող են լիովին կատարել :

Իւր մեծ կոչումն արժանապէս կատարելու և իւր ամենագոր ազգեցու թիւնն ազգի բարուց վրայ պաշտօնէր և շահաւէտ դործելու համար՝ երեք բան հարկաւոր է կնոջ — առաջին՝ **Դասաւորութիւն**, երկրորդ՝ **Դասաւորութիւն**, և երրորդ՝ **Դարձեալ** **Դասաւորութիւն** : Հարկաւոր է կնոջ միտքը զարգացնել գիտութեանց մէջ եւ պատրաստել իւր մարդայ խորհրդներուն և զաւակաց ուսման մասնակից լինելու : **Դասաւորութիւնը** կսոյ է ամուսիններու մէջ, իսկ ագիտութիւնն արդեւ : **Դասաւորութիւնը** մխթարութիւն է . իսկ ագիտութիւնն հայածիւ մխթարութեան : Տգիտութիւնը կը ծնանի հազար տեսակ պակասութիւններ և հազար տեսակ մոլորութիւններ կանանց համար : **Լսացէք**, ինչո՞ւ համար այս ինչ կիներ կը մեռնի ձանձրութենէ և սրտնեղութենէ . — վասն զի զուրկ է լուսաւորութենէ : **Ինչո՞ւ** համար այն ինչ կիներ աճնամոլ է և ունայնասէր . — վասն զի զուրկ է լուսաւորութենէ : **Ինչո՞ւ** համար այն ինչ կիներ ունայն և ջնկն բաներ գնելու համար չը խնայէր իւր մարդայ ամսական աշխատանքը . — վասն զի զուրկ է լուսաւորութենէ , օտար է մտաւոր և բարոյական աշխարհի համար , զուրկ է իւր պարտուց ճանաչողութենէն , որպէս մարդ , որպէս անդամ **Լզգի** , որպէս անդամ **Լիկեղեցւոյ** : Կանանց կրթութեան անհոգութիւնը մեր հայրերու համար աններելի էր . իսկ մեզ համար՝ անշուշտ դատապարտելի , մեզ համար , որ կրգգանք , թէ իգական սեռի լուսաւորութիւնն աւելի նշաւաւոր է քան արականին : **Վասն զի** օրորացէն մինչեւ ի գերեզման , կանանց ազգեցութեան տակն ենք մենք ,

վասն զի կրգգանք . որ կանանց լուսաւորութեան համար հոգալով կը հոգանք մեր սեպհական լուսաւորութեան համար : **Վ** որ փրկարար և արժանաւոր մտքեր կը ներշնչէ կանանց , նա մի հարուածով կ'ոչնչացնէ մեր ջնկն կիւրքերն ու կորստական ցանկութիւններն : Կանայք որքան գերազանց լինին , այնքան արժանաւոր կը լինինք և մեք , և երբ նոքա ըզմեզ կ'երջանկացնեն , ինքեանք ևս յայնժամ երջանիկ կը լինին :

Տիկնայք , դուք որ պատճառ էք կանանց լուսաւորութեան այս մեծ գործին ⁽¹⁾ . դուք որ այսպէս համեստութեամբ սկսաք այսքան նշանաւոր գործը , կրգգա՞ք արդեօք , որ դուք կուտաք **Լզգին** նոր հոգի և նոր կեանք , այն **Լզգին** , որ անշուշտ անջնջ կը պահպանէ իւր սրտի խորոց մէջ ձեր անուններն ու յիշատակը : **Վասն զի** , **Լստուածածնի** աւետման այս մեծ աւուր մէջ , աւետեցիք դուք հայրենի երկրին՝ **Վարաբաղին** եւ **Հայաստանին** , թէ այս օրէն բացուած է հայ ազգական համար՝ ճանապարհ լուսաւորութեան , որ կը տանի առ **Լստուած** , առ **Լզգն** և առ ապագայ կեանքն , ցոյց կուտայ կենաց նպատակը և դէպ ի նոյն նըպատակն դիմելու անմոլար ուղին :

Տիկնայք , դուք եւս օրհնեալ լինիք այս օրէն կանանց մէջ : **Լս** օրէն **Տէրն** ձեզ հետ է , լուսոյ և ճշմարտութեան ճանապարհի վրայ , ուր ցանկացաք դուք հրաւիրել այս փոքրիկ աղջիկները , և որ պէտք է տանի զնոսա առ **Փրկիչն** մարդասէր , որ իւր քաղցր ձայնով , տասն և ութ դար է , կը կոչէ

(1) Դարոյնի հիմնարկութեան և բացման պատճառ եղած էր 40՝ նուիրատու Տիկններէ բաղկացած **Խնամակալութիւն** , որ կազմուած էր **Պ. Հան. Հեանցի** յորդորանօր :

մանուկներն ասելով, «Թող տու՛ք մանկաւոյդ գալ առ իս, և մի արգելուք զդոստ, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից » :

Սրբազան Հայր, Դուք, որ արթուն և անդադար քննելով կ'աշխատիք մեր լուսաւորութեան համար : Դուք, որ առաջին անգամ օրհնեցիք այս լուսաւորութեան մեծ գործն, ընդունելով զայն Չեր հովանաւորութեան տակ. Դուք՝ նոյնպէս առաջին անգամ բացիք լուսաւորութեան ճանապարհը խղճալի որբոց համար, զորս այնքան սիրեց Չեր Վարդապետն, որ զինքն ներկայացուցիչներ ընտրեց երկրի վրայ. Դուք ևս երկու որբ աղջիկներ Չեզ որդեգիր ընտրեցիք յանուն Չեր Վարդապետին, որ ասաց. «Որ դք ընկալցի զմանուկ մի այսպիսի յանուն իմ՝ զիս ընդունի » :

Բոյրեր, ձեր առաջ բացուած է այսօր նոր ճանապարհ լուսաւորութե, որ պիտի առաջնորդէ ձեզ՝ ձեր պարտաւորութիւնը ճանաչել և ձեր սիրտըն ու միտքը դարձնել այս օրէն առ լստուած, առ Վրդն և առ ճշմարիտ կեանքն, որոյ լոյսն խաղաղ է և անանց : Դուք պարտիք ձեր աչաց առջեւ ունենալ այն բարեպաշտ կանանց պատկերները, որոց համար Փրկիչն ասաց. «Սարթա՛, Սարթա՛, դու հոգաս և զբաղում իւրիք զբաղեալ ես, բայց աստ սակաւ ինչ պիտոյ է. Սարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի ՚ի նմանէ » :



Փ Ո Ւ Ն Ձ

ԵՒ ԹՂԹԱԿԻՑ ԻՒՐ

Փոռնի 699 թուոյն մէջ մի անաւուն նամակ կը կարդանք, որ թշնամանաց լուտանք մ'է ընդդէմ երկուց Սրբազան Պատրիարքաց և միաբանա-

կան Ուխտիս Ս. Լըուսաղէմի :

Նամակն անանուն լինելուն պատճառաւ՝ մենք ուղղակի Փոռնի կը ճանաչենք հեղինակ և պատասխանատու, ուստի և Փոռնի կ'ուղղէ՛ք մեր խօսքը :

Փոռնի կ'ամբաստանէ թէ՛ Պօլսոյ և Լըուսաղէմի Ս. Պատրիարքները Խաչակից եղած են Լգիպոտոսի ազգայինքն բարոյապէս մեռցնելու համար :

Փոռնի կը հրատարակէ թէ՛ երկու Պատրիարքաց և Լըուսաղէմի Ս. Խաբանութեան շնորհիւ Լգիպոտոսի Խորենեան գաղտնը գոցուած է և ուսանողք ու ուսուցիչք ցրուած :

Փոռնի կը գուշակէ թէ՛ եկեղեցիներն եւս շուտով պիտի գոցուին, եթէ Ս. Եսորպ եպիսկոպոսն առաջ նորդ չընշանակուի նոյն Վիճակին :

Փոռնի կը սպառնայ վերջապէս, թէ Լըուսաղէմի և ոչ մի միաբանն պիտի յաջողի Լգիպոտոսի առաջնորդական աթոռին վրայ բաղմելու, ինչ և երկնէն իջած Կրեշտի Տէր Շալայ :

Երբ թէ եւ մենք գիտենք, որ ոչ թէ միայն Փոռնի սոյն ամբաստանութիւնն, այլ և իւր բոլոր հրատարակութիւնքն արժէք չունին Հասարակութեան առջեւ, թէ և համողութեւն ենք, որ սոյն վայրախօս ամբաստանութիւնն՝ Փոռնի և կամ իւր մի նմանակցին անհատական զրախօսութեան արդիւնքն է, և ոչ թէ Լգիպոտոսի Հասարակութեան, թէ և կը գուշակենք, որ Փոռնի հրատարակութեանց գէ՛մ պատասխան գրելով՝ բաւականին կարեւորութիւն և արժանաւորութիւն տուած պիտի լինինք, զոր ամենեւին չունի Փոռնի. բայց այս ամեն պարագաներն իմանալով հանդերձ, գարծեալ պիտի պատասխանենք համառօտիւ, ինչպէս ՍԻՕՆԻ նախորդ թիւերով պատասխանեցինք Նշալուսին :

Ինչպէս որ Փռնիկ հրատարակու-
թեան գլխաւոր շարժառիթն է Սեւ-
րոպ Եպիսկոպոսի եգիպտական ա-
ռաջնորդութիւնն, նոյնպէս է և դրո-
րոցներ և եկեղեցիներ գոցուելու հնա-
րագիտական համբաւն : Երբ Սեւ-
րոպ առաջնորդ լինի Եգիպտոսին, ե-
կեղեցիները կը պայծառանան, դրո-
րոցները կը բարեկարգուին, յառա-
ջագիմնութիւնն ու բարօրութիւնը կը
ծովանան նոյն Սիւնիկին մէջ և Եր-
ւանի ու Փռնիկ ներքոյները մինչեւ
յօդս կը բարձրանան : Իսկ երբ Սեւ-
րոպ հեռանայ կամ առաջնորդ չը լի-
նի Եգիպտոսի, դպրոցներու և եկե-
ղեցիներու եկամուտները կըսպառին,
պարտքերը կը դիզուին, դռները կը
փակուին, և եթէ երկնքէն հրեշ-
տակներ եւս իջնեն, կարող չեն բա-
նալ, որովհետեւ դպրոցներ և եկե-
ղեցիներ բանալու հրաշագործ բա-
նալին միայն Սեւրոպի ձեռքն է, որ
իւր քնացած ժամանակ՝ ուրիշ մահ-
կանացուի չը հաւատար, այլ միայն
Երւանի և Փռնիկ :

Եւս հրաշագործ բանալիով, եր-
բեմն Տրապիզնի Սիւնիկին մէջ եւս
90 հաւ դպրոցներ բացուած էին, ու-
րոնք, երբ Սեւրոպ հեռացաւ և բա-
նալին իւր հետ տարաւ, իսկոյն մի ա-
ւուր մէջ գոցուեցան, ինչպէս որ մի
աւուր մէջ բացուած էին :

Իրաւ է որ, երկու Սրբազան Պատ-
րիարքներն ու Երուսաղէմի Սրբա-
նութիւնն սոսկի հրաշագործ բա-
նալի չունին, բայց շատ պիտի ցաւին,
եթէ ստուգիւ իմանան, որ սոյնօրինակ
հրաշագործութեան վրայ հիմնուած
են Եգիպտոսի և Երէքսանդրիոյ դրո-
րոցներն, և ոչ թէ ժողովրդի համակամ
ուսումնասիրութեան, արդիւնաբեր
գործակցութեան և իրենց զաւակաց
յառաջագիմնական ըղձից և եռան-

դեան : Սիւնիկին, եթէ մեսրոպեան
հրաշագործութեան վրայ հիմնուած
լինի իրենց զաւակաց ապագայն, Սեւ-
րոպ եպիսկոպոսն մահկանացու լինե-
լով, անշուշտ մի որ կը փոխի յաշտօր-
հէս, իսկոյն Եգիպտոսի բովանդակ
Սիւնիկին խորին թշուառութեան մէջ
կ'ընկղմի և երկնքէն իջած հրեշտակներն
անգամ կը տկարանան գոցուած եկե-
ղեցիներն ու դպրոցներն բանալ :
Սիւնիկին այն խեղճ դպրոցներուն, որոց
բանալին հրաշագործներու ձեռքն է,
և ոչ թէ ժողովրդի և իրեն ընտրած
բանիւրուն ուսումնականներու եւ
դաստիարակներու :

Սեւրոպ այնպէս գիտէր և այնպէս
կը հաւատանք, որ եթէ Եգիպտոսի
Սիւնիկին մէջ ազգային դպրոցներ կան
և պիտի բարեկարգուին ու յառաջա-
դիմեն, այդ մեծ գործը յատկապէս
ժողովրդի ձեռքով պիտի կատարուի
և ոչ Սեւրոպի կամ Սիրակոսի : Սիւ-
նիկին, Սեւրոպը ժողովրդին դրամ
պիտի չըտայ դպրոցներու համար, այլ
ընդհակառակն՝ դրամ պիտի պահանջէ
ժողովրդէն իրեն բաղմագիմի ծախուց
համար : Իսկ եթէ դրամներն ու եկա-
մուտներն ևս, Սեւրոպ եպիսկոպոսի
ներկայութեամբ և բացակայութեմբ,
կը բազմանան և կը նուազին հրաշիւք,
այդ գաղտնիքն մենք չը գիտենք, և
հետեւեալպէս կանխաւ ներողութիւն
կը խնդրենք այս մասին Երւանի և
Փռնիկ :

Շատ կը ցաւինք, որ Փռնիկ կամ
իւր թղթակիցն, ս'գիտէ ինչ մասնա-
ւոր շահու համար, կը համարձակին
ժողովրդի անունն իրենց խաղաղիկ
առնել, մերթ Պատրիարքներն ամբաս-
տանել ու ժողովուրդ մեռցնելու Գալ-
նիկի կոչել, և մերթ Երէքսի Սիւն-
իկին ու Երուսաղէմի Սրբա-
նութեան դէմ անպատկառ թշնա-

մանքներ տեղալ, անկրաւ անուանել, գործողներ և տաճարներ դրոշմելու մեղաւոր իրենք, և այսպէս հասարակութեան ողջ մտութիւնը պատրելու համար՝ աւանդաբանութիւնն ի գործ դնել: Կը ցուենք, այս, բայց ոչ թէ եղած զոպարտութեանց համար, այլ նոյն իսկ Փռնըն համար, որ ստացող գրուածոց հրատարակութեամբ միայն կ'ապրի ու կը սնանի, և ոչ թէ ճշմարտութեան սպասաւորելով: Բայց ճշմարտութեան ձայն լսած ունի՞ Փռնըն, իւր բովանդակ կենաց մէջ, որ կարողանայ իմա նալ թէ ի՞նչ է ճշմարտութիւնն:

ԵՐԱՆԵՆԵՐԻ ԲԱՐՈՅՈՒՄ

Երբ արժանաւոր անձինք բարձր պաշտօններու կը հասնին, բնականօրէն ամեն մարդիկ կ'սւրբախանան:

Ե. յսպիսի ճշմարիտ ուրախութեամբ կ'աւետեմք ահա մեր համադպի Սեծ. Յ. Պաքալ Սուրառեանի նոր պաշտօնը:

Սեծ. Սուրառեան, որ քաղաքիս Լատարիական Հիւպատոսարանի մէջ ատենադպրութեան, Թարգմանութեան և Փոխ — Հիւպատոսութեան պաշտօն կը վարէր, այժմ նոյն Տէրութեան հրովարտական Յոսպէի Հիւպատոս անուանեցաւ:

Սուրառեան մեր շնորհաւորելով մեր Սեծ. Համադպի այս նոր պաշտօնը՝ կը փափաքիմք տեսնել զինքն աւելի բարձրագոյն պաշտօնի մէջ, որոյ համար գեղեցիկ գրուաւ կանք են իւր հմտութիւնն, գործունէութիւնն և բարեհամբաւ վարքն ու բարբը:

— Քաղաքիս նախկին Կուսակալ Վսեմ. Լլի Փաշան փոխուեցաւ և իրեն յաջորդեց Վսեմ. Վեամիլ Փաշան, որ Կիպրոսի Կուսակալ էր:

— Լտանայէն գրուած տեղեկութիւններէն հետեւեալը կը հաղորդենք մեր ընթերցողներուն: «Կաթողիկոսական խնդիրն լրացու և Երեւան 10 ին Երեսփոխան իշխաններն ու ժողովականք, արդէն իւրեանց պաշտօնը աւարտած լինելով, իւրաքանչիւրն իրենց տեղը դարձան: Իսկ ամսոյս 20 ին ամենայն փառաւորութեամբ և երգոց նուագներով Սրբազան Կաթողիկոսն եւս ճանապարհ հանեցինք:

Սուրբութեանը ներկայ էին շատ մը Լազայիք և քաղաքիս բոլոր աւանաւոր իշխանք, այնպէս որ Կիլիկիոյ հորիզոնը պայծառ կը փայլէր և առաւել յաղթանակ փատկող բանակի մը կը նմանէր, քան թէ Կիլիկիոյ Պաշակալի մը ուղեւորութեան:

Երկայ ամսոյս 28 ին Կաթողիկոսական (Օ)ժման հանգիսին ներկայ գրուելու համար, Թուականէս 3 օր առաջ, Սիմէօն Սրբազանն, քանի մի իշխաններով, գնաց ի Սիս և տակաւին հոն է:

Սիմէօն Սրբազանի ջանիւք Լլի նախկին Քիլիկիոյ մի հաստատուեցաւ քաղաքիս մէջ, շաբաթական թեթեւութեամբ, և արդէն 70 հօգի անգամ գրուեցան: Այս իշխերութեան նպատակին և գործող վրայ ուրիշ անգամ տեղեկութիւններ կը հաղորդեմք, ինչպէս և Սիսի ու Կիլիկիոյ նիւթական և բարոյական նկարագրութիւնն, ասիկէ վերջ, Լատուծով գիտողութեան կ'առնուիք»:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

MÉTHODE DE LECTURE

POUR LA LANGUE FRANÇAISE

A L'USAGE DES ARMÉNIENS

ԿՐԹՈՒԹԻՒՆ

ԳԱՂՂԻԱՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԸՆԹԵՐՑՄԱՆ

Ի ՊԵՏՍ ՀԱՅՈՑ

Տպագրուած է Ս. Աթոռոյս Տպարանին մէջ, մաքուր
թղթի վրայ, քանի մի պատկերներով, յատկապէս մեր
Ազգային Դպրոցներու և ամեն Հայ անհատներու համար,
որոնք կը փափաքին գործնական և դիւրին եղանակաւ վար-
ժուիլ Վաղղիարէն լեզուի ընթերցման մէջ: Բաղկացած է
երկու մասներէ, յորոց առաջնոյն մէջ կը պարունակին գը-
րեր, վանկեր, բառեր, կարճ ընթերցուածներ՝ հայագիր
հնչմամբ և հայերէն նշանակութեամբ միասին. իսկ երկ-
րորդին մէջ կը պարունակին բարոյական մտածութիւններ
և Ազգային Պատմութենէ ու Աշխարհագրութենէ գաղ-
ղիարէն թարգմանուած համառօտ հատուածներ: Կը ծա-
խուի, ինչպէս Ս. Աթոռոյս Գրատան, նոյնպէս և Կ. Պօլսոյ
Երուսաղէմատան մէջ, Գին 100 փարայ:

544 440 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100 101 102 103 104 105 106 107 108 109 110 111 112 113 114 115 116 117 118 119 120 121 122 123 124 125 126 127 128 129 130 131 132 133 134 135 136 137 138 139 140 141 142 143 144 145 146 147 148 149 150 151 152 153 154 155 156 157 158 159 160 161 162 163 164 165 166 167 168 169 170 171 172 173 174 175 176 177 178 179 180 181 182 183 184 185 186 187 188 189 190 191 192 193 194 195 196 197 198 199 200 201 202 203 204 205 206 207 208 209 210 211 212 213 214 215 216 217 218 219 220 221 222 223 224 225 226 227 228 229 230 231 232 233 234 235 236 237 238 239 240 241 242 243 244 245 246 247 248 249 250 251 252 253 254 255 256 257 258 259 260 261 262 263 264 265 266 267 268 269 270 271 272 273 274 275 276 277 278 279 280 281 282 283 284 285 286 287 288 289 290 291 292 293 294 295 296 297 298 299 300 301 302 303 304 305 306 307 308 309 310 311 312 313 314 315 316 317 318 319 320 321 322 323 324 325 326 327 328 329 330 331 332 333 334 335 336 337 338 339 340 341 342 343 344 345 346 347 348 349 350 351 352 353 354 355 356 357 358 359 360 361 362 363 364 365 366 367 368 369 370 371 372 373 374 375 376 377 378 379 380 381 382 383 384 385 386 387 388 389 390 391 392 393 394 395 396 397 398 399 400 401 402 403 404 405 406 407 408 409 410 411 412 413 414 415 416 417 418 419 420 421 422 423 424 425 426 427 428 429 430 431 432 433 434 435 436 437 438 439 440 441 442 443 444 445 446 447 448 449 450 451 452 453 454 455 456 457 458 459 460 461 462 463 464 465 466 467 468 469 470 471 472 473 474 475 476 477 478 479 480 481 482 483 484 485 486 487 488 489 490 491 492 493 494 495 496 497 498 499 500 501 502 503 504 505 506 507 508 509 510 511 512 513 514 515 516 517 518 519 520 521 522 523 524 525 526 527 528 529 530 531 532 533 534 535 536 537 538 539 540 541 542 543 544 545 546 547 548 549 550 551 552 553 554 555 556 557 558 559 560 561 562 563 564 565 566 567 568 569 570 571 572 573 574 575 576 577 578 579 580 581 582 583 584 585 586 587 588 589 590 591 592 593 594 595 596 597 598 599 600 601 602 603 604 605 606 607 608 609 610 611 612 613 614 615 616 617 618 619 620 621 622 623 624 625 626 627 628 629 630 631 632 633 634 635 636 637 638 639 640 641 642 643 644 645 646 647 648 649 650 651 652 653 654 655 656 657 658 659 660 661 662 663 664 665 666 667 668 669 670 671 672 673 674 675 676 677 678 679 680 681 682 683 684 685 686 687 688 689 690 691 692 693 694 695 696 697 698 699 700 701 702 703 704 705 706 707 708 709 710 711 712 713 714 715 716 717 718 719 720 721 722 723 724 725 726 727 728 729 730 731 732 733 734 735 736 737 738 739 740 741 742 743 744 745 746 747 748 749 750 751 752 753 754 755 756 757 758 759 760 761 762 763 764 765 766 767 768 769 770 771 772 773 774 775 776 777 778 779 780 781 782 783 784 785 786 787 788 789 790 791 792 793 794 795 796 797 798 799 800 801 802 803 804 805 806 807 808 809 810 811 812 813 814 815 816 817 818 819 820 821 822 823 824 825 826 827 828 829 830 831 832 833 834 835 836 837 838 839 840 841 842 843 844 845 846 847 848 849 850 851 852 853 854 855 856 857 858 859 860 861 862 863 864 865 866 867 868 869 870 871 872 873 874 875 876 877 878 879 880 881 882 883 884 885 886 887 888 889 890 891 892 893 894 895 896 897 898 899 900 901 902 903 904 905 906 907 908 909 910 911 912 913 914 915 916 917 918 919 920 921 922 923 924 925 926 927 928 929 930 931 932 933 934 935 936 937 938 939 940 941 942 943 944 945 946 947 948 949 950 951 952 953 954 955 956 957 958 959 960 961 962 963 964 965 966 967 968 969 970 971 972 973 974 975 976 977 978 979 980 981 982 983 984 985 986 987 988 989 990 991 992 993 994 995 996 997 998 999 1000 1001 1002 1003 1004 1005 1006 1007 1008 1009 1010 1011 1012 1013 1014 1015 1016 1017 1018 1019 1020 1021 1022 1023 1024 1025 1026 1027 1028 1029 1030 1031 1032 1033 1034 1035 1036 1037 1038 1039 1040 104

POUR LA FAUCONNERIE FRANÇAISE

265

269

276

279

281

286

288

၁၃၆၂ ခု၊ ဇူလိုင်လ ၁၅ ရက်၊ နံနက် ၈ နာရီ၊ ရန်ကုန်၊ မြန်မာနိုင်ငံတော်

ԳՆԱՀԱՅԵԼ ՎՃԱՌՈՆ ԺԱՄԿԱՐԴՅԱՆ ԱՊՔԻՍԻՆՈՍԿԱՆ ԸՆԴՈՒՄԻ

10. 11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20. 21. 22. 23. 24. 25. 26. 27. 28. 29. 30. 31. 32. 33. 34. 35. 36. 37. 38. 39. 40. 41. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50. 51. 52. 53. 54. 55. 56. 57. 58. 59. 60. 61. 62. 63. 64. 65. 66. 67. 68. 69. 70. 71. 72. 73. 74. 75. 76. 77. 78. 79. 80. 81. 82. 83. 84. 85. 86. 87. 88. 89. 90. 91. 92. 93. 94. 95. 96. 97. 98. 99. 100. 101. 102. 103. 104. 105. 106. 107. 108. 109. 110. 111. 112. 113. 114. 115. 116. 117. 118. 119. 120. 121. 122. 123. 124. 125. 126. 127. 128. 129. 130. 131. 132. 133. 134. 135. 136. 137. 138. 139. 140. 141. 142. 143. 144. 145. 146. 147. 148. 149. 150. 151. 152. 153. 154. 155. 156. 157. 158. 159. 160. 161. 162. 163. 164. 165. 166. 167. 168. 169. 170. 171. 172. 173. 174. 175. 176. 177. 178. 179. 180. 181. 182. 183. 184. 185. 186. 187. 188. 189. 190. 191. 192. 193. 194. 195. 196. 197. 198. 199. 200. 201. 202. 203. 204. 205. 206. 207. 208. 209. 210. 211. 212. 213. 214. 215. 216. 217. 218. 219. 220. 221. 222. 223. 224. 225. 226. 227. 228. 229. 230. 231. 232. 233. 234. 235. 236. 237. 238. 239. 240. 241. 242. 243. 244. 245. 246. 247. 248. 249. 250. 251. 252. 253. 254. 255. 256. 257. 258. 259. 260. 261. 262. 263. 264. 265. 266. 267. 268. 269. 270. 271. 272. 273. 274. 275. 276. 277. 278. 279. 280. 281. 282. 283. 284. 285. 286. 287. 288. 289. 290. 291. 292. 293. 294. 295. 296. 297. 298. 299. 300. 301. 302. 303. 304. 305. 306. 307. 308. 309. 310. 311. 312. 313. 314. 315. 316. 317. 318. 319. 320. 321. 322. 323. 324. 325. 326. 327. 328. 329. 330. 331. 332. 333. 334. 335. 336. 337. 338. 339. 340. 341. 342. 343. 344. 345. 346. 347. 348. 349. 350. 351. 352. 353. 354. 355. 356. 357. 358. 359. 360. 361. 362. 363. 364. 365. 366. 367. 368. 369. 370. 371. 372. 373. 374. 375. 376. 377. 378. 379. 380. 381. 382. 383. 384. 385. 386. 387. 388. 389. 390. 391. 392. 393. 394. 395. 396. 397. 398. 399. 400. 401. 402. 403. 404. 405. 406. 407. 408. 409. 410. 411. 412. 413. 414. 415. 416. 417. 418. 419. 420. 421. 422. 423. 424. 425. 426. 427. 428. 429. 430. 431. 432. 433. 434. 435. 436. 437. 438. 439. 440. 441. 442. 443. 444. 445. 446. 447. 448. 449. 450. 451. 452. 453. 454. 455. 456. 457. 458. 459. 460. 461. 462. 463. 464. 465. 466. 467. 468. 469. 470. 471. 472. 473. 474. 475. 476. 477. 478. 479. 480. 481. 482. 483. 484. 485. 486. 487. 488. 489. 490. 491. 492. 493. 494. 495. 496. 497. 498. 499. 500. 501. 502. 503. 504. 505. 506. 507. 508. 509. 510. 511. 512. 513. 514. 515. 516. 517. 518. 519. 520. 521. 522. 523. 524. 525. 526. 527. 528. 529. 530. 531. 532. 533. 534. 535. 536. 537. 538. 539. 540. 541. 542. 543. 544. 545. 546. 547. 548. 549. 550. 551. 552. 553. 554. 555. 556. 557. 558. 559. 560. 561. 562. 563. 564. 565. 566. 567. 568. 569. 570. 571. 572. 573. 574. 575. 576. 577. 578. 579. 580. 581. 582. 583. 584. 585. 586. 587. 588. 589. 590. 591. 592. 593. 594. 595. 596. 597. 598. 599. 600. 601. 602. 603. 604. 605. 606. 607. 608. 609. 610. 611. 612. 613. 614. 615. 616. 617. 618. 619. 620. 621. 622. 623. 624. 625. 626. 627. 628. 629. 630. 631. 632. 633. 634. 635. 636. 637. 638. 639. 640. 641. 642. 643. 644. 645. 646. 647. 648. 649. 650. 651. 652. 653. 654. 655. 656. 657. 658. 659. 660. 661. 662. 663. 664. 665. 666. 667. 668. 669. 670. 671. 672. 673. 674. 675. 676. 677. 678. 679. 680. 681. 682. 683. 684. 685. 686. 687. 688. 689. 690. 691. 692. 693. 694. 695. 696. 697. 698. 699. 700. 701. 702. 703. 704. 705. 706. 707. 708. 709. 710. 711. 712. 713. 714. 715. 716. 717. 718. 719. 720. 721. 722. 723. 724. 725. 726. 727. 728. 729. 730. 731. 732. 733. 734. 735. 736. 737. 738. 739. 740. 741. 742. 743. 744. 745. 746. 747. 748. 749. 750. 751. 752. 753. 754. 755. 756. 757. 758. 759. 760. 761. 762. 763. 764. 765. 766. 767. 768. 769. 770. 771. 772. 773. 774. 775. 776. 777. 778. 779. 780. 781. 782. 783. 784. 785. 786. 787. 788. 789. 790. 791. 792. 793. 794. 795. 796. 797. 798. 799. 800. 801. 802. 803. 804. 805. 806. 807. 808. 809. 810. 811. 812. 813. 814. 815. 816. 817. 818. 819. 820. 821. 822. 823. 824. 825. 826. 827. 828. 829. 830. 831. 832. 833. 834. 835. 836. 837. 838. 839. 840. 841. 842. 843. 844. 845. 8

Գ. Զատ տեւորակ առնել ուղղը, պէտք է ամեն մէկ տեւորին չորս դա